

657.5

U-16

1 or U.S.-S

2 or gr-

657.5
4-16

24 SEP 2010
ETD W

ՀԵՇՆԱՐԿ

ԱՌԵՒՏՐԱՎԱՆ

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ

կրկնակի իտալական սիստեմով

Կ. Ա. Զ Մ Ե Յ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԸԲՐԵՀԱՄԵԱՆ

Դիմումի հաշուապահութեան կողմէից



Թ Բ Ֆ Լ Ի Ս
Էլեքտրաշարժ տպարան «ՀԱՊԵՐԱՆՏՈ» Ելիզ. 17,
1912



Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հայոց լեզուով հաշուապահութեան ձեռնարկի բացակայութիւնը Թուսաստանում վերջին ժամանակներս շատ զգալի է լինում. թէպէտ Տաճկաստանում կան սակաւաթիւ ձեռնարկներ, բայց նորա չեն կարող բաւականութիւն տալ Թուսաստանում՝ հայոց լեզուով հաշուապահութեամբ պարապողներին, նախ այն պատճառով, որ նոքա գրուած են արևելեան բարբառով, խառն տաճկերէնի հետ և երկրորդ՝ չեն համապատասխանում այժմեան առևտրա-արդիւնաբերական պահանջներին և ձեւերին։ Այն բազմաթիւ դիմումները, որ արվում են գործարանական կենդրոններից և գաւառներից, խնդրելով ուղարկել նրանց հաշուապահութեան հայերէն ձեռնարկ, ինձ խրախուսեցին ոռւսերէն լեզուով գրած իմ հաշուապահութիւնը, որ արդէն երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ, թարգմանել հայոց լեզուով, վերածելով գործարանական արդիւնաբերութեան մասը զուտ առևտրականի՝ երկաթէ, բակալէյնի, կօլօնիալնի եւ բամբակէ ապրանաց։

Իմ բազմամեայ փորձառութիւնը, որպէս զիխաւոր հաշուապահ խոշոր առևտրա-արդիւնաբերական ձեռնարկութեանց մէջ և որպէս հաշուապահութեան ուսուցիչ, համոզեցին ինձ, որ հաշուապահութեան արուեստը լոկ մատեանների ձեւերը ուսումնասիրելով դժուար է խրացնել։ Հիմնաւոր ուսումնասիրութեան համար անհրաժեշտ է ծանօթանալ նրա հետ տեսականորէն, հասկանալ և ըմբռնել նրա առանձնայատկութիւնները, համեմատել նրան ուրիշ եղանակների հետ, ծանօթանալ մատեանների կատարած դերերի հետ, որպէսզի հեշտ լինի հաշուապահութիւնը յարմարեցնել այն գործին, որին պէտք է ծառայէ։

Հենց այդ նպատակով ձեռնարկիս մէջ մեծ տեղ է տրուած հաշուապահութեան տեսական մասին, որտեղ ընթերցողը կըդանէ այն ամենը, ինչ որ կարևոր է հաշուապահութեան համար։

Իբրև առաջին անգամ Թուսաստանում լոյս տեսած հայերէն հաշուապահական ձեռնարկ, աշխատեցի, ոյժերիս ներածին չափ, իւր պարզ դարձուածքներով մատչելի դարձնել ընթերցողներին, մինչեւ անգամ հաշուապահութիւն չը գիտցող անձերի համար։ Հասայ իմ նպատակիս թէ ոչ, այդ ցոյց կը տայ ապագան։

ՆԻԿ. Ա.ԲՐԱ.ՀԱՄԵՍ.Ն



5523-ին

1) Հաշուապահը ոչ մի դէպքում և ոչ մի նպատակով չպիտի տարածէ իր գործատիրոջ առետրական գաղտնիքները: Նա իրաւունք չունի հաղորդել ոչ իր տիրոջ գործողութիւնները և ոչ նրա գործի շրջանառութեան ծաւալը, որովհետեւ նրա մի անզգոյշ խօսքը կարող է փշացնել գործի հիմքը և ազդել գործատիրոջ վարկի վրայ:

2) Հաշուապահը պարտաւոր է պահել և տանել գրքերը միանդամայն կանոնաւոր. օրէնքով խստիւ արգելուած է ուղղել, ջընջել, կեղտոտել և տողերի ու յօդուածների մէջն գրել: Սխաները պէտք է միշտ ուղղել կարմիր թանաքով, կամ այդ մասին երեսի վերջը բացատրութիւն տալ:

3) Հաշուապահը պարտաւոր է գրքերը մաքուր պահել, պարզ և հասկանալի գրուած և միշտ փակած ունենալ պահարանում:

4) Ոչ մի դէպքում հաշուապահը հաշիւներ գրելը չպիտի յետաձգէ կամ գրուած հաշիւների՝ միւս գրքերը անցնելը թողնէ, մանաւանդ օժանդակ գրքերը, որ օրահաշուի մէջ համապատասխան յօդուած կազմուելուն պէս անմիջապէս պէտք է անցկացնել:

5) Սխաներից գերծ լինելու համար, որոնք կարող են մեծ բարդութիւնների պատճառ լինել, հաշուապահը պէտք է ունենայ մի յիշատակարան, ուր անմիջապէս պէտք է նշանակէ այն հաշիւները, որոնք պէտք է շուտ և անսխալ կատարուեն:

6) Հաշուապահը իրաւունք չունի մասնաւորապէս պարապելու այն առետրով, որով պարապում է իր տէրը: Այս օրէնքի վրայ առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել, որովհետեւ յաճախ այս հողի վրայ զեղծումներ են լինում:

7) Հաշուապահը պարտաւոր է պահանջել գործի մէջ եղող անձերից, ժամանակին տեղեկութիւններ տալ գործի ընթացքի, հանքերի, գործարանների, արհեստանոցների, խանութների, պահեստների և բաժանմունքների մասին, նոյնպէս պէտք է հետեւ, որ իւրաքանչյւը ամսի 1-ին ներկայացուի նախընթաց ամսուայ գրամական հաշիւը:

8) Հաշուապահը պարտաւոր է մանրամասն ծանօթանալ առետրական մատեաններին վերաբերեալ օրէնքների հետ, նոյնպէս առետրական օրէնքի փոփոխութեանց, որոնք գրուած են Ռուսաց Օրէնսդրքի XI հատորի Բ մասի մէջ, 605 յօդուածից մինչև 650-ը:

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Մ

ՀԱՅՈՒՄ.ՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Հաշուապահութիւնը ժողովրդի տնտեսական կեանքում ահագին նշանակութիւն ունի. առևտրական գործի համար նա նոյնքան կարեոր է, որքան ծովագնացի համար կողմնացոյցը:

Հաշուապահութեան զլիաւոր նպատակը և նրա դերը կայանում է նրանում, որ նախ նա ցոյց է տալիս գործատիրոջը նրա կարողութեան չափը, երկրորդ՝ գործի ընթացքը և նրա դրամական դրութիւնը, և վերջապէս նա ցոյց է տալիս առևտրի արդիւնքը տարուայ վերջին:

Հաշուապահութիւնը, որպէս գործնական զիտութիւն ամեն տեսակ առևտրին կարելի է յարմարեցնել. նա մեզ սովորեցնում է կանոնաւոր և որոշ սիստեմով հաշիւները դասաւորել և անցնել առևտրական գրքերը: Գրքերի մէջ գործողութիւնները պիտի գրուեն փաստերի հիման վրայ, ամենայն ճշգութեամբ, առանց փոփոխութեան, աւելի ճիշտն ասած՝ այնքան պարզ պիտի գրուեն, որ բացի հաշուապահին հասկանալի լինելուց՝ հասկանալի լինին և ուրիշներին: Գրուած յօդուածները այնպէս պէտք է դասաւորուած լինեն, որ միշտ պարզապէս կարելի լինի տեսնել կատարուած գործողութիւնների նկարագրութիւնը:

Առանց հաշուապահութեան ոչ միայն գործի հիմքը կարելի է քանդել, այլ և զրկել գործատիրոջը իր բարի անունից և վերջինս գործի այսպիսի խառն գրութեան մէջ ոչ մի հնարաւորութիւն չի ունենայ գիտենալ, թէ գործի որ մասը կամ ինչ չափով իրեն օգուտ կամ վնաս հասցեց և վերջը նրան այնպիսի դժուար գրութեան մէջ կըդնէ, որ շատ դժբաղդ վախճան կարող է ունենալ:

Յիշեալ պատահարներից զերծ մնալու համար ամենահաստատ երաշխաւորութիւն է ներկայացնում կանոնաւոր հաշուապահութիւնը, որ է ճիշտ տեղեկութեանց աղբիւրը և գործի անցեալ ու

ներկայ կացութեան տեղեկացոյցը. այդ տեղեկութիւնները հիմք են ծառայում ապագայ կօմբինացիաների:

Այսպէս, ուրեմն, գործի ճիշտ պատկերը և նրա հետևանքը տեսնելու համար պահանջւում է կանոնաւոր հաշուապահութիւն. նա է մեզ հնարաւորութիւն տալիս գործի իսկական դրութիւնը տեսնել, որոշել թէ որքան էր գործատիրոջ դրամագլուխը հաշիւները փակելիս և արդեօք գործը մեզ օգուտ է տուել թէ վնաս և ինչ հանգամանքներում:

Կան ի հարկէ շատ վաճառականներ, որոնք իրենց սովորութեան և սուր յիշողութեան վրայ յոյս դնելով, առևտուրը տանում են առանց հաշուապահութեան. այդ, իմ կարծիքով, հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ գործը փոքր է. հէնց որ գործը մեծանայ և բազմատեսականայ, այն ժամանակ կերևայ հաշուապահութեան այդ եղանակի, կամ աւելի ճիշտն ասած, հաշուապահութեան բացակայութեան կործանիչ հետևանքները:

Առևտրի առանձնայատկութեանց հետ ծանօթութեան, ապրանաց արժէքների մասին տեղեկութեանց, նրանց փոփոխութեանց պատճառների և ժամանակի, նոյնպէս և առևտրական փորձառութեանց կարելի է հասնել միայն կանոնաւոր, ճիշտ և սիստեմատիքաբար մատեանները պահելով:

Յիշեալներին կարելի է հասնել միայն և միայն հաշուապահութեան օգնութեամբ ընդհանրապէս և կրկնակի իտալական հաշուապահութեամբ—առաւելապէս:

Հաշուապահութեան մասին խօսելիս մենք ի նկատի ունենք մատեանների գրելու հասարակ ձեւը:

Այս եղանակը նրանում է կայանում, որ պէտք է առևտրական իւրաքանչիւր գործողութիւն իր կատարած ըրպէին անցկացնել մատեանը և հարկաւոր ժամանակ գործատիրոջ ցանկացած հաշիւնները այն տեղից գուրս գրել:

Հասարակ ձեւի հաշուապահութիւնը ամբողջացած կամ կատարելագործուած չի կարելի համարել, որովհետև գրուածների մէջ ընդհանուր կապ չկայ, գրած յօդուածները ստուգել, դրամագլուխը, օգուտը և վնաս որոշելը դժուար է. նոյնպէս մեծ դժուարութիւն է ներկայացնում այս հասարակ եղանակով որոշել առևտրական գործողութեանց անցեալ և ներկայ դրութիւննը: Հաշուապահութեան հասարակ ձեւի այսքան պակասութիւնները թույլ չեն տալիս առևտրական գործողութիւնները կանոնաւորապէս արձանագրել և տանել:

Մենք կանգ չենք առնի հաշուապահութեան միւս եղանակների վրայ, որպիսիք են՝ ջրանսիականը, ամերիկականը և այլն. դրանք կրկնակի հաշուապահութեան նոր, դեռ չը կատարելագործուած եղանակներ են, որոնք կարօտ են փոփոխութեան և փորձերի ենթարկման. սակայն այդ փորձերը ոչ մի պրակտիքական հետեւանք չեն տուել և ոչ դեռ նրանց օգտաւէտութիւնը չէ ապացուցել:

Հաշուապահութեան ամենակատարելագործուած ձեզ, որով կարելի է տանել թէ առևտրա-արդիւնաբերական և թէ հասարակական գործերը—կրկնակի իտալական հաշուապահութիւնն է, որի բացատրութեամբ մենք կը զբաղուենք:

Տեսական մաս (Թէկորիա)

ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԷՌՈՒԹԻՒՆԸ

«Հաշուապահութիւն» բառը (բայց առաջ է եկել գերմանական երկու բառերից „Buch“—գիրք և „halten“—տանել—այսինքն գրքերը տանել. «Իտալական» կոչում է նա այն պատճառով, որ առաջին անգամ երևաց իտալիայում, իտալական վաճառականների մէջ.*.) կրկնակի կոչում է նա այն պատճառով, որ իւրաքանչիւր գործողութիւն գրվում է մայր տոմարում երկու անգամ—մինը հաշուի պարտքում (գերետ) և միւսը հաշուի պահանջում (կրեղիտ):

Իտալական հաշուապահութեան եղանակի գիւտը համարւում է աշխարհիս խոշոր գիւտերից մինը: Առևտրական գործողութեանց կատարման լօգիկական հետեւանքն է հաշուապահութիւն տանելու եղանակը: Առևտրական գործողութիւնների մէջ միշտ մասնակցում են երկու կամ աւելի անձինք, սակայն ոչ պակաս երկուսից. մի անձն ինքն իր հետ առևտրուր անել չի կարող. նա համաձայնութեան մէջ է մտնում մի այլ անձի հետ:

Ինչ տեսակ գործողութիւն էլ կատարուելիս լինի—գնման, վաճառման, կապալի, փոխառութեան թէ գրաւի—միշտ էլ մասնակցում են երկու անձինք, գնման և վաճառման մէջ—վաճառողը և գնողը, կապալի ժամանակ կապալառուն և այն հիմնարկութիւնը, որին

*.) Կրկնակի հաշուապահութիւն հասրողը եղել է նշանաւոր մաթեմատիկոս արեղայ լուկա Պաշեոլո: Նրա առաջին կրկնակի հաշուապահութիւնը լոյս է տեսել 1494 թուական վենետիկում:

տրւում է որոշ ապրանք, իսկ պարտքի ժամանակ պարտատէրը և պարտապանը: Իւրաքանչիւր առևտրական գործողութիւն, որի հետեւանքն է ապրանքի կամ իրերի և դրամի փոփոխութիւն, գրւում է երկու անգամ միենոյն թւով և գումարով մի անձի պարտքը և միւսի պահանջը, որ նշանակում է թէ մէկը պարտէ, միսը պահանջում է: Մէկին պարտապան շինել, միւսին պարտատէր, շատ հեշտ է, երբ գործողութիւնը կատարւում է երկու անձանց մէջ և այդպիսի գործողութեան արձանագրութիւնը ոչ մի կասկածի ենթարկուել չի կարող: Այսպիսի գործողութեանց հաշիւները կոչւում են անձնական հաշիւներ: Ինչպէս պէտք է անել այն գէպքում, երբ թէպէտ գործողութիւնը կատարւում է երկու անձանց մէջ, բայց հնարաւորութիւն չը կայ դոցա համար հաշիւներ բացել. առևտրական աշխարհում ամէն օր կատարւում են բազմաթիւ գործողութիւններ, առևտրականը պէտք է գործ ունենայ բազմաթիւ գնողների հետ, որոնցից շատերը փոքրարժէք ապրանքներ են գնում, մինը գնում է երկու արշին մահուդ, միւսը մի արշին, երբորդը մի քառորդ արշին և այլն. բոլոր այս գէպքերում վաճառականը հնարաւորութիւն չունի գիտենալ գնողների անուն և ազգանունները, ուստի չի էլ կարող նրանց համար հաշիւներ բացել, սակայն գործողութիւնը կատարուած է, ապրանքը փոխարինուել է գրամի. ով է այս գէպքում պարտատէրը և պարտապանը, անձինք չը կան, իսկ վաճառականը պէտք է ընդունէ ապրանքի փոխարինութեան կատարուած իրողութիւնը: Այս գէպքում վաճառականը դատում է այսպէս, որ գործողութիւնը կատարուած է ոչ թէ անձանց մէջ, այլ փոխարինուող առարկաների մէջ, որոնցից մինը լինում է մուտք, (գերետ) միւսը ծախս (կրեղիտ). այսպիսի գործողութեանց հաշիւները կոչվում են առարկայական հաշիւներ:

Վերոյիշեալներից մենք այն եղբակացութեան ենք գալիս, որ պարտապանը առանց պարտատէրի և պարտատէրը առանց պարտապանի լինել չեն կարող: Եւ ահա այս է հաշուապահութեան հիմնական օրէնքը: Այս պատճառով է, որ մայր տոմարը ներկայացնում է միշտ պարտքի ու պահանջի հաւասարութիւն և մշտական հաշուէկշիոն, որից շատ պարզ կերպով երևում է ամբողջ գործողութեանց շրջանառութիւնը և նրանց առանձին մասերի հաշիւների գրութիւնը: Կրկնակի հաշուապահութեամբ տարուած ձեռվ շատ շուտ երեան են հանւում բաց թողուած կամ սխալ անցած հաշիւները, որովհետև ամսէ ամիս գիրքը ստուգւում է փորձակառով (որօնի բալանս): այլապէս հաշուէկշիոն (բալանս) չի ստացուի և պարտք ու պահանջը

իրար հաւասար չեն լինի: Հետևապէս գրքում գրուած իւրաքանչիւր թիւր հաւասարակը ուութեան վրայ աղդում է և փորձակը իւր ցոյց է տալիս, որ օրահաշում գրուած բոլոր հաշիւները անցած են մայր տոմարը:

Դեղետ (debet) և կրեդիտ (credit) լատինական բառեր են և գործ են ածւում հայերէն «պարտ է», «պահանջում է» բառերի տեղ: Այդ հայերէն բառերը թէպէտ իրենց բովանդակութեամբ լատինական դեբետ և կրեդիտին համապատասխանում են, սակայն առարկայական հաշիւների մէջ դեբետ ապրանաց, դեբետ մթերքների, կրեդիտ վճարելի մուրհակների և այն, խօսակցութեան մէջ տարօրինակ կ'թւան. Եթէ մենք, օրինակ, գործածենք փոխանակ դեբետի—պարտ է և կրեդիտի—պահանջում է, այսպէս, օրինակ, ապրանքը պարտ է, մթերքները պարտ են և վճարելի մուրհակները պահանջում են, այս պատճառով դեբետ և կրեդիտ բառերը իտալիայից մեզ համելուց յետոյ Ռուսաստանում էլ գործածական դառնան, խօսակցութեան ժամանակ և գրագրութեան մէջ աւելի յարմար է գործածել դեբետ ապրանաց հաշուի, որ նշանակում է որևէ թիւնշանակել ապրանաց հաշուի պարտքին, կրեդիտ՝ վճարելի մուրհակների, նշանակում է նշանակել վճարելի մուրհակների պահանջին և այն:

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԳՐԲԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՄԱՆՑ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Կրկնակի հաշուապահութեան գրքերը երկու մասի են բաժանվում՝ ՀիՄՆԱԿԱՆ և ՕԺԱՆԴԱԿ: Առաջին տեսակի գրքերն են՝ Գոյրի (инвентарная), Օրահաշիւ (журналъ), և Մայր գիրք կամ Մայր տումար (главная книга); Օժանդակ գրքերը զանազան են լինում և կախումն ունեն առևտրի տեսակից. Դրամարկղ (кассовая), Զանազան անձնաց (реконт), Ապրանաց (товарная) Արժեքատր թղթերի (фондовая), Մուրհակների (вексельная), Պատճէնի (копировальная) և այլն:

Բացի յիշեալներից հաշուապահը, ինկատի առնելով առևտրական գործողութիւնները, կարող է ուրիշ օժանդակ գրքեր էլ ունենալ: Յամենայն դէպս նորա պէտք է գրուած լինեն այնպէս, որպէս ցոյց է տալիս պրակտիկան և որոնց նետ մենք ներքում կը ծանօթացնենք գործով:

Քննենք իւրաքանչիւրը այդ գրքերից առանձին և բացատրենք նրանց նշանակութիւնը:

ԻՆՎԵՆՏԱՐ (Գոյրի գիրը)

Ինվէնտարը պարունակում է իր մէջ գործատիրոջ ունեցածի և պարտքի ցուցակը:

Առձեռն գոյրը կոչւում է ԱԿՏԻՒ և պարունակում է իր մէջ ամեն մի առարկայ, որ տիրոջ համար որևէ արժէք ունի, որպիսին է կանխիկ գրամը, արժէքաւոր թղթերը, ապրանքը, անշարժ գոյրը—տները, դատարկ հողեր, գործարաններ, հանքեր, շինութիւններ, շարժական կայք—կահկարասիք, գործիքներ, մեքենաներ, նոյնպէս ստանալիք պարտքեր (дебиторы) հաշիւներով և մուրհակներով (римессы): Պարտքի հաշիւր կոչւում է ՊԱՍՍԻՒ և պարունակում է իր մէջ վճարելի պարտքերը հաշիւներով (кредиторы), մուրհակներով (тратты), զանազան պարտաթղթերով բանկերին և այլ հիմնարկութիւններին:

Ինվէնտարի գիրքը ծառայում է, որպէս կարեոր գոկումնատառարական հիմնարկութեան և կոչւում է հիմնական այն պատճառով, որ նա հիմքն է միւս հաշուապահական գրքերի բացման: Առանց ինվէնտարի գիրքը կազմելու մենք չենք կարող գիտենալ, ինչ ունէինք մենք առևտուրը սկսելիս և ինչ գոյացաւ տարուայ վերջին:

Այս գիրքը կարեոր է նաև նրանով, որ ցոյց է տալիս գործատիրոջ զուտ լրամագրութիւր: Դրամագլուխը որոշելու համար պէտք է ակտիւթից հանել պասսիւր. մնացորդը այն գրամագլուխն է, որը և գործատիրոջ իսկական սեփականութիւնն է:

Ինվէնտարի գիրքը գրւում է երկու հակառակ երեսների վրայ: Զախ կողմի վրայ նշանակում է ակտիւ, աջի վրայ պասսիւ:

Այս գրքի առանձնայատկութիւնն այն է, որ մինչեւ սրանով միւս գրքերի բացելը, պէտք է հաշուէկառել, այսինքն հաւասարեցնել ակտիւը պասսիւի հետ. այդ կարելի է անել զուտ գրամագլուխը գրելով պասսիւում. այդպիսով ակտիւի և պասսիւի գումարները կը հաւասարուեն:

Առևտրի առաջին տարում ինվէնտարը երկու անգամ՝ է կազմւում. մէկը տարուայ սկզբին գրքերը բացելիս և միւսը տարուայ վերջին—փակելիս: Հետեւեալ տարիներում ինվէնտարը կազմւում է միայն մի անգամ տարուայ վերջը. այդպիսով անցեալ տարուայ

վերջին կազմուած ինվէնտարը այս տարուայ սկզբին նոյնը կ'լինի:

Ինվէնտարով շատ հեշտ է որոշել վնասը կամ օգուար, համեմատելով զուտ շահը տարուայ սկզբին և վերջին:

Օրինակի համար, վերցնենք հետևեալ երկու ցուցակները, մինը տարուայ սկզբի համար, միւսը տարուայ վերջի, երբ գրքերը փակւում են:

ՅՈՒՅՍԿ I.

Ակտիւ Առ 1-ն Յունուարի 1911 թ. **Պասիսիւ**

| | | | |
|------------------------------|------------------|------------------------------|------------------|
| Դրամարկղ | 15000 00 | Պարտապաններ | 18000 00 |
| Տոկոսաբեր թղթեր | 17000 00 | Վճարելի մուրհակներ | 14000 00 |
| Շարժական կայք | 2000 00 | Պարտք Քաղ. Վ. Հնկ. ան- | |
| Անշարժ կայք | 75000 00 | շարժ կայքի գրաւականով. | 34000 00 |
| Ապրանք | 45000 00 | Դրամագլուխ | 118500 00 |
| Պարտատէրեր | 13500 00 | | |
| Գանձելի մուրհակներ | 17000 00 | | |
| | 184500 00 | | 184500 00 |

ՅՈՒՅՍԿ II.

Ակտիւ Առ 31-ն Դեկտեմբերի 1911 թ. **Պասիսիւ**

| | | | |
|------------------------------|------------------|------------------------------|------------------|
| Դրամարկղ | 12500 00 | Պարտապաններ | 16000 00 |
| Տոկոսաբեր թղթեր | 16000 00 | Վճարելի մուրհակներ | 15000 00 |
| Շարժական կայք | 2500 00 | Պարտք Ք. Վ. Հ. անշարժ | |
| Անշարժ կայք | 75000 00 | կայքի գրաւականով. | 33200 00 |
| Ապրանք | 67000 00 | Փոխանցիկ գումարներ . . . | 1200 00 |
| Պարտատէրեր | 11000 00 | Զեղջման դրամագլուխ | 3950 00 |
| Գանձելի մուրհակներ | 15500 00 | Դրամագլուխ | 130150 00 |
| | 199500 00 | | 199500 00 |

Այս ցուցակներից երկում է որ՝

Տարուայ սկզբին դրամագլուխը եղել է 118500,00

Տարուայ վերջին դրամագլուխը դարձել է 130150,00

Համեմատելով այս երկու գումարները, մենք տեսնում ենք, որ

դրամագլուխը տարուայ վերջը աւելացել է 11650 թ. ահա այս տարբերութիւնը՝ 11650 թ. շահ է առևտրական ձեռնարկութիւնից: Եթէ տարուայ վերջը դրամագլուխը աւելի պակաս լինի տարուայ սկզբի դրամագլխից—կը ստացուի վնաս:

Այս թուերը, որպէս շահի ընդհանուր թուեր մեզ կարող են գոհացնել միայն այն ժամանակ, եթէ առևտրուրը միայն մի տեսակի գործով է զբաղուած, եթէ առևտրուրը բաղկացած լինի մի քանի տեսակի գործից, այն ժամանակ այսպէս ցոյց տուած շահը բաւական չէ, պէտք է իւրաքանչիւր տեսակի գործից ստացուած շահը առանձնապէս գիտենանք. այդ անհրաժեշտ է առևտրի համար:

Այսպիսով, եթէ առևտրա-արդիւնաբերական գործը մի քանի մասերից է կազմուած, մենք պէտք է պարզենք և գիտենանք իւրաքանչիւր մասից և իւրաքանչիւր ճիւղից և առարկայից ստացուած շահը: Այս կը պարզուի տարուայ վերջին, գրքերը փակելու հաշուից:

Բացի սովորական ժամանակներում գրքերը բացելուց և փակելուց, որպէս են տարուայ սկիզբը և վերջը, ինվէնտար կազմուում է դրամագլուխը որոշելու համար, նաև հետեւեալ դէպքերում. առեւտուրը վերջացնելիս (լիկվիդացիա), սնանկութեան դէպքում (որ ուստի ուստի համար անհանդանութեան է) գործը մի ծեռքից միահին անցնելիս:

Կան դէպքեր, որ ակտիւը հաւասար է լինում պասիւին, այդ նշանակում է, որ սեփական դրամագլուխը չը կայ, պատահում է որ պասիւը ակտիւից աւելանում է, այդ նշանակում է որ միջոց չը կայ պարտքերը վճարելու և ահա այդ ժամանակ է, որ գործի տէրը սնանկում է:

Ինվէնտարում դասաւորուում են հաշիւները կարգով՝ ինչպէս մի կողմը այնպէս էլ միւս կողմը, իւրաքանչիւր առարկայ ժամանական նշանակելով և գրելով նըանց քանակութիւնը, արժեքը, կանխիկ դրամի, տոկոսաբեր թղթերի, պարտատէրերի և պարտապանների իւրաքանչիւրի դիմաց դնելով գումարները, գանձելի մուրհակներ վճարելի և այլն:

Սա անւում է նրա համար, որ սրանցով պէտք է կազմուեն օրահաշուի մէջ համապատասխան յօդուածներ և անցնուեն միւս գրքերը:

Ինվէնտարը, որպէս վերը ասացինք, գրւում է առանձին գրքում երկու հակառակ երեսների վրայ, ձախ կողմում ակտիւը, աջ կողմում պասիւը: Կարելի է ինվէնտարը մի երեսի վրայ էլ պահել. առաջ պէտք է գրել ակտիւը ու դնել գումարը, ապա պասիւը:

Այս ձեռվ գրելը սխալ չէ, բայց ես ընդունում եմ առաջին ձեռ, որպէս աւելի նպատակայարմաք:

Մենք բացատրեցինք, թէ ինչպէս է կազմւում ինվէնտարը տարուայ սկզբին. փակման մասին առանձին կ'խօսենք «զրբերի ամփոփման» գլուխում:

ԺՈՒՐՆԱԼ (ՕՐԱԿԱՂԻՒ)

Ժուրնալ բառը առաջ է եկել ֆրանսերէն „Le jour“ բառից, որ նշանակում է օր. Ժուրնալը այլապէս կարելի է անուանել յիշատակարան: Բոլոր գործողութիւնները, ինչ որ կատարւում են օրուայ ընթացքում առևտրական գործում, պէտք է կարգով նշանակուեն օրահաշւում: Առանց իւրաքանչիւր օպերացիայի օրահաշիւ անցնելը և առանց պարտք ու պահանջ որոշելը, մենք հնարաւորութիւն չենք ունենայ այս կամ այն հաշիւը համապատասխան հաշվի կամ գրքի մեջ անցնել: Ուստի ժուրնալը կոչւում է հիմնական գիրք և նրա մէջ գրուածները —յօդուածներ:

Նախքան իմ առաջարկած ձեռվ ժուրնալին անցնելը, աւելորդ չեմ համարում ցոյց տալ և այն ձեռն ու եղանակները, որ առաջարկում են զանազան ձեռնարկների հեղինակները, որոնցով առաջնորդուում են հաշուապահութեան ուսուցիչները: Վերջինների եղանակով պահանջուում է նաև ունենալ Մեմորիալ, առանց որին ժուրնալ գրել չի կարելի:

ՄեՄՈՐԻԱԼ առձեռն տետրակ է, որի մէջ սեազրութեան պէս գրվում է, առանց յետաձելու և առանց բաց թողնելու, ամեն ինչ, որ կատարւում է առևտրում: Մեմորիալը ծառայում է որպէս ժուրնալի ուղեցոյց, նրա նիւթիցն է քաղւում պարտք ու պահանջի որոշումն: Մեմորիալը, բացի հաշուապահից կարող են գրել նաև գործում եղող ուրիշ անձինք: Նրա մէջ ամէն ինչ կարելի է ուղղել, բայց քերել չի կարելի, այլ պէտք է թեթևակի ջնջել և վրան կարմիր թանաքով գրել:

Յարմարութեան համար ուրիշների առաջարկած ժուրնալի ձեռ մենք կանուանենք I ձեռ, իսկ իմ ընդունածը՝ II ձեռ:

Օրինակի համար վերցնենք առևտրական կեանքից երեք գործողութիւններ մեմորիալը գրելու համար:

ՄԵՄՈՐԻԱԼԻ ԶԵՒԾ

Յունուար ամիս

| | 2 | | |
|---|--|---------|----|
| 1 | Տրուած է Ե. Ի. Առաքելեանին փոխարինաբար . . . | 250 | 00 |
| | 5 | | |
| 2 | Ստացուած է Կ. Ի. Մութափեանից իր պարտքի գիմաց | 700 | 00 |
| | 11 | | |
| 3 | Վաճառուած է Գ. Օ. Աղելիսանօվին, աստ, | | |
| | 25 հատ Ուզունիկ 4'' ձ 2/50 | 62,50 | |
| | 75 » Խողովակներ 5'' գաղ. 1250' 6'' ձ 2/75 | 3438,88 | |
| | Դոցա փոխարին ստացուած է՝ | | |
| | Մի մուրհակ ս/թ. 6 ամիս ժամանակով | 3000 | 00 |
| | Կանխիկ գրամով | 501 | 38 |
| | | 3501 | 38 |

Այս մեմորիալի օգնութեամբ կազմւում է ժուրնալի առաջին ձեռ: Ներկայ գէպօւմ ժուրնալը նոյն մեմորիալն է, միայն մաքուր արտագրած և դեբետ ու կրէդիտը որոշած, այսինքն ինչ անձանց կամ հաշիների մէջ է կատարուել գործողութիւնը, այլ կերպ ասած՝ նա որ ստանում է (դեբետ) պարտ է նրան, ով տալիս է (կրէդիտ) կամ այն ինչոր ստացուում է (մուտք—դեբետ) և այն ինչոր որպահանջուում է (ելք—կրէդիտ), ուրեմն պարզ է որ առանց դեբետի կրէդիտ և առանց կրէդիտի դեբետ լինել չի կարող:

Նախ քան մեմորիալում գրուածը ժուրնալում անցկացնելը, անհրաժեշտ է առաջ գանել դեբետը և կրէդիտը և ապա անցկացնել ժուրնալ՝ գրելով դեբետի և կրէդիտի տակ:

Դեբետ և կրէդիտը գտնելու համար նախնական երկու հարցեր գոյութիւն ունեն՝

ԴԵԲԵՏԻ ՀԱՄԱՐ — 1, ինչ է մեջ մօտ ստացում
2, ով է ստանում

ԿՐԷԴԻՏԻ ՀԱՄԱՐ — 1, ինչ է մեջնից դուրս գնում
2, ով է մատակարարում

Այս երկու հարցերը իրար հետ են տրուած, եթէ առաջին հարցին պատասխան չը կայ, տրուած է երկրորդ հարցը, որին կը գտնուի պատասխան: Այս հարցերը յարմարեցնելով միմորիալում գրուած յօդուածներին կը ստացուի հետեւալը՝

1, Տրուած է Առաջելեանին, աստ, փոխարինաքար 250 ըուպի:
Այս յօդուածը կարդալով դեբետը, գտնելու համար, այսպիսի
հարց ենք տալիս:

Առաջին հարց՝ Ի՞նչ է ստացւում մեզ մօտ.—Ոչինչ:
Եղիկորդ հարց՝ Ո՞վ է ստանում—Առաջելեանը:

Ուրեմն դեբետը կը լինի՝ Զանազան անձինք:

Առաջելեանի փոխարէն մենք ասում ենք «Զանազան անձինք»
այն պատճառով, որ եթէ դեբետ և կրէդիտը ազգանուններով ա-
նուանենք, այն ժամանակ մայր գրքում պէտքէ իւրաքանչիւր անձի
համար առանձին հաշիւ բացենք, որ շատ անյարմար է: Այդ բանը
կարելի է անել, եթէ գործի մէջ քիչ անձինք լինէին, որոնց հետ
մենք հաշիւ ունենք, բայց մեծ ձեռնարկութեանց մէջ, որտեղ պէտք
է բազմաթիւ կլիենտների հետ գործ ունենանք—կլիենտների ազգա-
նուանները նշանակելը և դրանց համար մայր հաշւում առանձին-ա-
ռանձին հաշիւ բացանելը շատ անյարմար է:

Այսպիսի դէպքերում կազմւում է մի առանձին գիրք, որը
յարմարեցրած է յատկապէս անձանց և ֆիրմաների անձնական հա-
շիւնների համար և այդ գիրքը կոչւում է «ՐԵՍԿՈՆՏՐՈ». Նու կոչւում
է նաև Զանազան անձանց գիրք, դերետների և կրէդիտների գիրք,
անձնական հաշիւնների գիրք և վերջապէս կօնտօկուրանտի գիրք:

Այսպէս ուրեմն գտանք դեբետը—Զանազան անձինք
կրէդիտ գտնելու համար տանք այս հարցերը.

Ի՞նչ է մեզնից դուրս գնում—Դրամ 250 ր. ուրեմն կրէդիտը
կ'լինի դրամարկողը:

2, Ստացուած է Կ. Ի. Մուլթաֆեանից, աստ, պարտքի հաշուին
700 ըուպի:

Այս յօդուածին էլ յարմարեցնելով վերև յիշուած հարցերը
կ'ստանանք,

Հարց դեբետի համար՝ Ի՞նչ է մեզ մօտ ստացում: պատասխան՝
700 ըուպի:

Ի՞նչը կը լինի դեբետ. դեբետը կը լինի դրասարկողը: Հարց կրէդի-
տի համար—ովէ մեզ տալիս—Կ. Ի. Մուլթաֆեան, ո՞վ կը լինի կրէ-
դիտը, կրէդիտը կը լինի՝ Զանազան անձինք:

3, Վաճառուած է Գ. Օ. Աղիլիանօվին, աստ, զանազան ապրանք
3501.38 կոպէկի:

Դրա փոխարէն ստացուած է

Մուլթակ ս/թ. 6 ամիս ժամանակով 3000 ր. 00 կ.

Կանխիկ դրամով 501 „ 38 „

Հարց դեբետի համար. Ի՞նչ է մեզ մօտ ստացում: պատասխան—
Մուլթակ 3000 ըուպի և կանխիկ դրամ 501,38: Ի՞նչը կլինի դե-
բետ. դեբետը կը լինի գանձելի մուլթակները կամ ըիմէսա և դրամ-
արկղ: Ուրեմն, կը ստացուի երկու դեբետ—գանձելի մուլթակներ և
դրամարկղ: Կրէդիտի համար. Ի՞նչ է մեզնից զնում: ապրանք՝
3501 ր. 38 կոպ. Բնակ կը լինի կրէդիտ—կրէդիտ կը լինի ապրանքը:

Վերոյիշեալ օրինակներում մեմորիալի երեք յօդուածների՝ դե-
բետ և կրէդիտն էլ գտնուած է. բայց այսպիսի դէպքեր են լինում,
երբ այդ հարցերով չի կարելի գտնել, այդ ժամանակ յօդուածի բո-
վանդակութիւնն է օգնում մեզ. այդ մասին յետոյ կը խօսենք:

Տեսնենք թէ ինչ կարգով են գրւում ժուրնալում այդ յօ-
դուածները:

ԺՈՒՐՆԱԼԻ I ՁԵՒ

ՑՈՒՅՈՒԱՐ ԱՄԲԻ

| | | |
|---|--|------------------------------|
| 1 | Զանազան անձինք Դրամարկղին Տրուած է Ե. Խ. Առաջելեանին, աստ, փոխարինաքար | 250 00 |
| 2 | 5 | 700 00 |
| 3 | Դանական անձանց Դրամարկղը Դանական անձանց Ստացուած է Կ. Ի. Մուլթաֆեանից, աստ, պարտքի հաշուին Վաճառուած է Գ. Օ. Աղիլիանօվին, աստ, մուլթակ ս/թ. 6 ամիս ժամանակով Ստացուած է կանխիկ Վաճառուած է Աղիլիանօվին, աստ, 25 հատ Ուգոնիկներ 4'' ձ 2/50 62,50 75 հատ Խոզովակներ 5'' դադ. 1250' 6'' ձ 2/75 3438,88 | 3000 00 501 30 3501 38 |



Վերոյիշեալ աղիւսակից մենք տեսնում ենք, որ այս ձեզ ժուր-
նալը առանց մեմօրիալի գրել չի կարելի, որովհետև յօդուածի բո-
վանդակութիւնը գրւում է ոչ թէ դեբետ և կրէդիտից առաջ, այլ
նրանցից յետոյ:

Յոյց տանք այժմ իմ առաջարկած ժուրնալի ձեր (2-րդ ձե),
որ բաղկացած կը լինի նոյն յօդուածներից և կը գրուի առանց մեմօ-
րիալի օգնութեան: Ապագայ համեմատութիւնից դժուար չէ եզրա-
կացնել, որ իմ առաջարկած ժուրնալի ձեր աւելի յարմար է, քան
վերև ցոյց տուած ձեր:

ԺՈՒՐՆԱԼԻ II ՁԵՒ

ՑՈՒՑԱԿԱՐ ԱՄԲԻ

| ԺՈՒՐՆԱԼԻ ԱՄԲԻ | | ԳՈԿՈՒՄԵՆՏ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ | | ՄԱՍԻՆԱ- ԼՈՒՐ | ԸՆԴՀԱ- ՆՈՒՐ |
|---------------|------------------------------------|---------------------------|--|-----------------|----------------|
| ԳԵՐԵՑ. | Ա. ԳՐ. | ԿԲԼԻԴԻՑ | Ա. ԳՐ. | | |
| ԵՎՐ. | ԵՎՐ. | ԵՎՐ. | ԵՎՐ. | | |
| | | | 2 | | |
| 1 | Զանազ- անձինք | Դրամ- արկղ | Տրուած է Ե. Ի. Առաֆելանին փոխարինաբար | 250 00 | |
| | | | 5 | | |
| 2 | Դրամ- արկղ | Զանազ- անձինք | Ստացուած է Կ. Ի. Մութափեանից, իր պարտքի հաշուից . . . | 700 00 | |
| | | | 11 | | |
| | | Ապրանի | Վաճառուած է Գ. Օ. Աղիլսա- նովին, սատ, 25 հ. Ռւդոլինիներ 4' ա 2/50 62,50 75 հ. Խողովակներ 5'' դադ. 1250' 6'' ա 2/75 3438,88 որի դիմաց ստացուած է Մուրհակ ս/ա. 6 ամիս ժա- մանակի. | 3000 00 | |
| 3 | Դանձելի մուրի. Դրամ- արկղ | | Կանիթիկ դրամով | 501 30 | 8501 38 |

Հետևելով ժուրնալի ներկայ ձեին, մենք տեսնում եմք, որ նա
զանազանում է նախկիններից,

1-ին նրանով, որ իմ առաջարկած ձեով ժուրնալ գրելու հա-
մար հարկաւոր չի լինի մեմօրիալ ունենալ, որով կրճատուում է
գրքերի թիւը, նոյն պէս և ժամանակը, որը թանգ է գնահատուում
առևտրական աշխարհում:

2-րդ. Մի գրքի մէջ տեղաւորելով երկու գրքեր, ժուրնալի և
մեմօրեալի բովանդակութիւնը, մենք աւելի պարզ ենք կարողա-
նում տեսնել յօդուածների էութիւնը և աւելի հեշտ է լինում մեզ
գտնել դեբետ և կրէդիտը:

3-րդ. Կան յատուկ գծեր, 3 և 5, որտեղ գրւում են Մայր տո-
մարի երեսները. այդ գծերը առաջին ձեզ ժուրնալում չըկան:

4-րդ. Ժուրնալի յօդուածները համարագրւում են, որով հեշ-
տանում է զանազան տեղեկութիւններ քաղելը:

Կատարուած իւրաքանչիւր գործ, որը գրւում է ժուրնալում,
կոչում է յօդուած (շտաբ). յօդուածները լինում են երկու տե-
սակ—հասարակ եւ բարդ:

Հասարակ յօդուածները կոչում են այն յօդուածները, որոնց
մէջ կան երկու կողմեր—մի դեբետ և մի կրէդիտ (տես 1 և 2 յօ-
դուածներ՝ 250 ր. և 700 ր.): Բարդ յօդուած կոչում է այն յօ-
դուածը, երբ մի դեբետն ունի մի քանի կրէդիտ, կամ մի կրէդի-
տը մի քանի դեբետ (այս 3-րդ յօդուած մի կրէդիտ—ապրանք
3501.38 կոպ. և երկու դեբետ՝ գանձելի մուրհակներ՝ 3000 ր. և
դրամարկղ 501.38). այդպիսով երկու դեբետի գումարը հաւասար է
մի կրէդիտի: Ոչ մի գէպքում մի յօդուած չի կարող իր մէջ
պարունակել մի քանի դեբետ և մի քանի կրէդիտ:

Պէտք է նկատել, որ մինչեւ յօդուածի գումարը որոշուած չի
լինի, նա չի անցնի ժուրնալ. գումարը պէտք է որոշուի այն դրա-
մով, որ պետութեան մէջ պահուում է հաշիւը. օտար դրամները պի-
տի վերածել տեղական դրամի:

Ժուրնալի № 3 յօդուածը կարելի բաժանել երկու մասի. 1) վա-
ճառուած է Աղիլսանօվին ապրանք—սա մի ինքնուրոյն յօդուած է,
դեբետը կը լինի Զանազան անձինք, կրէդիտը—ապրանք: 2) Աղիլ-
սանօվին հետ հաշիւը վերջացած է—սա էլ նոյնպէս ինքնուրոյն յօ-
դուած է. դեբետներն են—զանձելի մուրհակները եւ դրամներկղը, կրէ-
դիտը—Զանազան անձինք:

Այսպիսի վերլուծումն յարմար է այն պատճառով, որ ըեսկօն-
տրոյում բացելով զանազան անձանց հաշիւ, կատարուած առևտրի
հետքը մշտական թողնում են գրքում. վաճառուած է Աղիլսանօվին
ապրանք 3501.38 կօպէկի:

Վերցնենք մի օրինակ, վերլուծուած յօդուածի ժուրնալի համար:

Յունաւար ամիս

| | | | 11 | | | |
|---|-------------------|------------------|---|---------|----------------|---------|
| 3 | Զանագ. անձինք | Ապրանի | Վաճառուած է Գ. Օ. Աղիլխանովին, աստ 25 հ. Ռուզիկներ 4'' և $\frac{2}{50}$ 75 հ. Խողովակներ 5'' դադ. 1250' 6'' և $\frac{2}{75}$ | 62 50 | <u>3438 88</u> | 3501 38 |
| | | | 11 | | | |
| 4 | Գանձելի մուրի. | Զանագ. անձինք | Ստացուած է Գ. Օ. Աղիլխանօվից պարտքի դիմաց մուրհակ ս/ա. 6 ամիս ժամանակով Կանխիկ դրամով . . . | 3000 00 | <u>501 38</u> | 3501 38 |
| | | | | | | |

Վերցնենք նոյն տեսակի մի ուրիշ օրինակ, Ժուրնալի համար:

Յունաւար ամիս

| | | | 7 | | | |
|---|---------------|-------------------|--|---------|--------------|---------|
| 5 | Դրամ- արկղ | Գանձելի մուրի. | Չեղջուած է Թիֆլ. Առ. Բանկում Ա. Պ. Դանիէլեանցի մուրհակը, պայման. 15 Մայիսի ս/թ. Չեղջ 7 %, 128 օրուան համար. | 2925 33 | <u>74 67</u> | 3000 00 |
| | | | | | | |

Այս յօդուածն էլ կարելի է բաժանել երկու մասի:

| | | | 7 | | | |
|---|---------------|-------------------|---|---------|--|--|
| 5 | Դրամ- արկղ | Գանձելի մուրի. | Ստացուած է Թիֆլ. Առ. Բանկից, Չեղջելով Ա. Պ. Դանիէլեանցի մուրհակը, պայմ. 15 Մայիսի. | 3000 00 | | |
| | | | 7 | | | |
| 6 | Տոկոս. | Դրամ- արկղ | Վաճառուած է Թիֆլ. Առ. Բան- կին Ա. Պ. Դանիէլեանցի մուր- հակի Չեղջման, 7% 128 օրուան. | 74 67 | | |
| | | | | | | |

Ես չեմ կարող խորհուրդ տալ յօդուածները այս ձևով վերլու-
ծել, որովհետեւ սրանով կատարուած գործողութեան էութիւնը չի
փոխւում, բայց Ժուրնալի մէջ թւերը շատանում են և շրջանառու-
թեան գումարն ուղանում է:

ԺՈՒՐՆԱԼԻ ԶԱՆԱՋԱՆ ՄԱՍԵՐԸ

Ժուրնալի յօդուածը բաղկացած է 5 մասից:

1) Գործողութեան կատարման ժամանակը: Ինչպէս երկում է 2-րդ ձևի ժուրնալից, տարին և ամիսը գրւում է երեսի սկզբին. թիւը գրւում է բովանդակութեան մէջ տեղը և բաժանում է նրա-
նից գծով և որովհետև յօդուածները շարքով իրար յետևից են գրւում,
ուստի աւելի պարզ որոշելու համար կարելի է գծերը կարմիր
թանաքով անել: — Ժուրնալի յօդուածների համար ժամանակը մեծ
նշանակութիւն ունի. նրանով ապացուցւում է կատարուած գործո-
ղութիւնը — եթէ կողմերի մէջ որևէ է տարածայնութիւն է լինում
այդ մասին. և երկրորդ նա ծառայում է որպէս ժամանակ զանա-
զան անձանց կամ հիմնարկութեանց տոկոսները հաշուելու:

2) Յօդուածների համարանքը (հյուրապիա): Ժուրնալի բոլոր յօ-
դուածները պէտք է համար ունենան և պէտք է նշանակուեն իրար
յետևից. Նոյնը բոլոր գրքերում: Յօդուածը գրելիս պէտք է գումա-
րից առաջ դնել համարը, որովհետև համարները հեշտացնում են
յօդուածներ գտնելը, քան գումարները. հեշտ են այն պատճառով,
որ միենայն օրը կարող են նոյնանման գումարով մի քանի յօդուած-
ներ լինել, ուստի գումարները կարող են սխալեցնել. համարները
այդ անյարմարութիւնից զերծ են պահում մեզ:

3) Դօկումենտների բովանդակութիւնը: Բովանդակութիւնը ժուր-
նալում ամեն հաշուապահ կարող է գրել իր ուզածին պէս, միայն
թէ գրուած լինին պարզ և հասկանալի, իսկական գործողութեանը
համապատասխանող, առանց աւելորդ, գործը աւելի մթնացնող խօս-
քերի: Յօդուածներ գրելու ամենագլխաւոր նպատակն է, որ բո-
վանդակութիւնը խմբագրուած լինի փաստօրէն, որպէսզի որևէ է
վէճի ժամանակ զանազան մեկնութիւններ չըտրուեն նրան: Իւրա-
քանչիւր գնման կամ վաճառման գործողութիւն, ստանալը կամ տալը
պէտք է նկարագրել մանրամասն, ցոյց տալով գոկումենտները, ո-
րոնց հիման վրայ կատարուած է գործողութիւնը: Բովանդակու-
թիւնը գրվում է սովորական տառերով և որքան կարելի է առանց
կըճատման:

4) Գործողութեանց գումարը: Գումարների համար որոշուած են
7 և 8 տողերը, որոնցից մինը մասնաւոր, միւսն ընդհանուր: Մաս-
նաւոր գծում նշանակուում են այն թուուերը, որոնք վերաբերում են,
գիցուք, ապրանքների տեսակներին. բարդ յօդուածների ժամանակ,
երբ մի կրէդիտօրն ունի մի քանի դեբիտօրներ, կամ մի դեբի-

տօր ունի մի քանի կրեդիտօրներ — մասնաւոր գծի թուերը գումարւում և գրւում են ընդհանուր գծում: Թուանշանները պէտք է պարզ գրել, միաւորը միաւորի տակ, տամասորը տամասորի, հարիւրաւորը հարիւրաւորի և այն: Եթէ գումարը բաղկացած է միայն ըուբլիներից, առանց կօպէկների, այն ժամանակ կօպէկների տեղը փոքրիկ գիծ է քաշուում կամ գէրօներ գրւում. իսկ եթէ գումարը կազմուած է միմիայն կօպէկներից, այն ժամանակ ըուբլիների տեղը մի գէրօ է գրւում: Եթէ կօպէկները մի թուանշանից են բաղկացած, օրինակ 7 կօպէկ, տամասոր կօպէկի տեղ գրւում է մի գէրօ, օրինակ 7 կօպէկի տեղ — 07 կօպէկ:

5) Դեղետ եւ կրէղիտ (պարտք և պահանջ): Յօդուածի վերնագիրը ցոյց է տալիս, թէ որ հաշիւների մէջ կատարուեց այս կամ այն գործողութիւնը: Դեբետը և կրէղիտը որոշելու համար առանձին ուշադրութիւն է հարկաւոր. հաշուապահութեան արուեստը դեբետ և կրէղիտ գանելու մէջն է. գրանք են, որ հիմք են ծառայում յօդուածը այս կամ այն հաշուին անցկացնելուն:

Դեբետ և կրէղիտ գրւում են 2-րդ և 4-րդ գծերում, հաստ տառերով: Իմ առաջարկած ձևի ժուրնալում հաշուապահը կարող է, առանց մեմօրիալ պահելու, ուղղակի դօկումենտներից անցնէ 6-րդ գիծը, որ մակագրուած է՝ «Դօկումենտների բովանդակութիւն». յետոյ արդէն բովանդակութիւնը կարդալով գտնել իմ ցոյց տուած հարցերով դեբետը և կրէղիտը. այս բոլորը սկզբնական ծանօթութեանց հանար են, իսկ երբ գուշ ծանօթանում էք հաշուապահութեան հետ և որոշ փորձ էք ձեռք բերում, այն ժամանակ այս էլ աւելորդ է: Օրինակ՝ հասնելու է Բ. Ս. Շխեանցին 70/0 մուրհակը 6 ամսով յետաձգելու համար՝ 3000 ըուբլոց — 150 ըուբլի:

Այս գէպքում դեբետ և կրէղիտ գանելու յայտնի հարցերը պէտք չեն գալ, ուստի յօդուածի միաքը պէտք է մեզ օգնի. դեբետի հարցին թէ՝ «Ի՞նչ է ստացուում մեզ մօտ», պատասխան է տրւում՝ «ոչինչ». միւս հարցին՝ «Ո՞վ է ստանում», դարձեալ նոյն պատասխանը — «ոչոք»:

Այժմ այսպիսի հարց տանք կրէղիտի համար. «Ի՞նչ է մեզնից դուրս գնում» — «ոչինչ». միւս հարցը՝ «Ո՞վ է մատակարարում» — «ոչոք»: — Ուրեմն ինչ անել. պէտք է դիմել յօդուածի մաքին:

Հասանելի խօսքից պարզ երևում է, որ Շխեանցը թէպէտ և ունի ստանալու, բայց դէռ չէ ստացել, ուրեմն Շխեանցը կրէղիտօր է. այժմ կրէղիտը գանելուց յետոյ, հեշտ է գտնել դեբետը. ինչ ունի Շխեանցը ստանալու — 150 ը. ինչու համար կամ ինչի փող — տոկոսների:

Բոլոր գումարները, որոնք ծախսւում են անդարձ, անպատճառ պէտք է դեբետ գրուեն, որովհետև դեբետը նշանակում է «պարտէ»: Ներկայ դէպքում քանի որ այդ գումարը ոչ ոքից յետ չէ ստացուելու, ուստի ոչ ոք պարտական լինել չի կարող: Այսպիսով, այս գումարը վերաբերում է դեբետին և տարուայ վերջը գրւում է վնասի հաշուին. ուրեմն դեբետ — Տոկոսներ, կրէղիտ — Զանազան անձինք (Շխեանցը):

Դեբետ և կրէղիտը որոշելուց և գրելուց յետոյ, մենք սկսում ենք յօդուածները անցկացնել միւս գրքերը, որոնց հետ տեսականապէս կըծանօթանանք գրքից:

ՄԱՅՐ ՏՈՄԱՐ

Մայր տոմար կոչւում է այն գիրքը, որ իր մէջ պարունակում է ամբողջ առևտրական գործողութեանց փաստերը, որոնցով պարզ և ճիշտ գաղափար կարելի է կազմել առևտրի այս կամ այն ճիւղի գրութեան և հետևանքի մասին: Թէպէտ գործողութիւնները կատարուելիս անմիջապէս արձանագրուում են ժուրնալում իրար յետեից, սակայն նոքա հնարաւութիւն չեն տալիս որոշելու գործի գրութիւնը, որովհետև նոքա խմբուած չեն մի տեղ:

Ընդհակառակին, Մայր տոմարում միստեմատիքաբար գրւում են ժուրնալից յօդուածներ զանազան խմբերով կամ հաշիւներով, որոնցով հեշտ է որոշել իւրաքանչիւր ճիւղի գրութիւնը:

Այս բանին օգնում է նաև այն, որ մայր տոմարում բացւում են առանձին հաշիւներ և դրանցով հնարաւոր է լինում ուսումնական գրեթե գործի մանրամասնութիւնները և որոշ եզրակացութեան գալ:

Մայր տոմարի մէջ հաշիւն բացելը կախուած է ժուրնալի մէջ յօդուած երևալուց:

Հաշիւները բաժանուում են հետևեալ գլխաւոր ձևերի:

1) ԴՐԱՄԱԿԱԼԻՒԻ ՀԱՇԻՎԻ:

Ամենա առևտրական ձեռնարկութեանց հիմքը կազմում է որամազլովս: Դրամագլուխը որոշուում է՝ մանրամասն ցուցակ կազմելով գործատիրոջ կայքի և պարտքի (ինվէնտար) — հաշուելով կանխիկ գրամը, ապրանքները, թղթերը, զանազան անձանց պարտքը, առհասարակ ամեն բան, ինչ որ կայ կամ ինչ կարելի է ստանալ: Դրամագլուխը կարող է աւելանալ և պակասել օգուտով կամ վնասով: Եթէ գրքերը փակելիս շահը աւելանում է այն ծախսերից, որոնք անդառնալի են, մնացորդը (Մալդօ), ժուրնալում համապատասխանալու — 150 ը. ինչու համար կամ ինչի փող — տոկոսների:

խան յօդուած կազմելով, անց են կացնում գրամագլխի հաշուի կրէդիտը: Եթէ անդարձ ծախսերի հաշիւն աւելանում է շահից, մնացորդը որպէս վաս անցնում է գրամագլխի հաշուի դեբետը: Այս անւում է առհասարակ տարին մի անդամ, տարուայ վերջին կամ գործը վերջացնելիս: Դրամագլուխը փոփոխութեան կենթարկուի նաև այն ժամանակ, երբ ինվէնտարը կազմելիս տարուայ սկզբին բաց է թողուած մի որևէ գումար ակտիւից կամ պասսիւից և այդ նրան է ընկել տարուայ մէջ, այս դէպքում պէտք է բաց թողուած գումարի մասին համապատասխան յօդուած կազմել ժուրնալում և անցնել դրամագլխի հաշուին. Եթէ գումարը վերաբերում է ակտիւին—դրամագլուխը մեծանում է, եթէ պասսիւին—դրամագլուխը պակասում է: Օրինակ՝ ինվէնտարը կազմելիս տարուայ սկզբին բաց է թողուած Գ. Մ. Մակարեանից սեր ստանալիքը՝ 500 ըուպի:

Դեբետ—Զանազան անձինք

Կրեդիտ—Դրամագլուխ

Միևնույնը կարող է պատահել և պասսիւի հետ:

Դեբետ—Դրամագլուխ

Կրեդիտ—Զանազան անձինք

2) ԶԱՆԱԶԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՇԻՒ:

Այս հաշուի Դեբետին գրւում է այն ամենը, ինչ որ զանազան անձինք պարտ են գործատիրոջ, իսկ կրէդիտ գրւում է այն ամենը, ինչ որ գործատէրը պարտ է Զանազան անձանց: Մայր տոմարի Դեբետը և կրէդիտը պիտի հաւասար լինեն Բեսկօնտրօյի Դեբետի և կրէդիտի բոլոր հաշիւների գումարին:

3) ԱՆՇԱՐԺ ԿԱՅՔԵՐԻ ՀԱՇԻՒ:

Ամեն մի նոր գնած կայք—հող, շէնք, գործարան, վարելահող այգի և այլն—գրւում է այս հաշուի Դեբետին, իսկ ծախուած կամ պակասածը՝ այս հաշուի կրէդիտին:

4) ՇԱՐԺԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻ ՀԱՇԻՒ:

Այս հաշուի Դեբետին գրւում է ամեն տեսակի շարժական կայք, ինչ որ կայ և ինչ որ գնուում է, իսկ կրէդիտին՝ ինչ որ ծախուած, պակասած կամ կորչում է:

5) ԱՊՐԱՆԱՑ ՀԱՇԻՒ:

Ապրանաց հաշուի Դեբետին գրւում է այն ամենը, ինչ որ մտնում է մեզ մօտ, գնուած ապրանաց արժէքները ծախսերով հանդերձ, քրէնով, ապահովագրութեամբ և այլն, իսկ կրէդիտ՝ վաճառուած կամ ուղարկուած ապրանքը:

Ապրանաց հաշիւները զանազան տեսակի են լինում. հաշիւնանարարական ապրանաց, հաշիւնանարարութեամբ ստացուած ապրանաց, հաշիւն ճանապարհի ապրանաց: Այս հաշիւները այն ժամանակ են մայր տոմարում բացւում, երբ նրանց թիւը հինգից—վեցից չեն անցնում. Երբ աւել են լինում, այն ժամանակ հարկաւոր է առանձին մատեան ունենալ յանձնարարական ապրանաց համար և իւրաքանչիւր ապրանքի և անձի համար առանձին հաշիւն բանալ. օրինակ՝ Շերամ, յանձնարարականով ուղարկուած Հայրումեանցին, Մարսէյլ և այլն: Այս հաշուի Դեբետին գրւում են այն ապրանքները, որոնց մենք ուղարկում ենք յանձնարարականով վաճառելու մեր հաշուին, նաև բոլոր ծախսերը, որ կատարումէ կօմիսիօնէրը, այլ և վաճառման կօմիսիօնը: Այս հաշուի կրէդիտին գրւում է վաճառմունքից ստացուած զուտ գումարը:

Այս հաշուի օգուտը և վնասը որոշելը դժուար չէ. Եթէ կրէդիտը Դեբետից աւել է, նշանակում է—շահ է, եթէ Դեբետը կրէդիտից աւելանում է նշանակում է. վաս է: Ընդհակառակը. Շերամ ստացուած Հայրուսեանցից, Մարսէյլ, յանձնարարակ. վաճառելու: Այս հաշուի Դեբետին գրւում է ապրանքի վաճառմունքից ստացած զուտ գումարը, գումար գալով բոլոր ծախսերը, նաև մեզ հասանելիք կօմիսիօնը, իսկ կրէդիտ անցնում է ուրիշ քաղաքում և դեռ չի անցել մեր ձեռքը, գտնուում է ճանապարհին. Երբ հաշիւր ստացւում է, թէ ապրանքը ուղարկուած է, մենք իսկոյն գրում ենք այն անձի հաշուի կրէդիտին, որից գնել ենք ու անց ենք կացնում «Ապրանք ճանապարհին» հաշուին, Դեբետում: Բոլոր ծախսերը, ինչոր կատարում են այս ապրանքի վրայ, գնելիս և ուղարկելիս, քրէն, բառնալ և իջեցնել, կօմիսիան (եթէ ապրանքը կօմիսիօնէրի ձեռքով է գնուած), գրում ենք այս հաշուի Դեբետին, ապա, ապրանքը ստանալուց յետոյ, կազմուում է կալկուեացիան, այսինքն ապրանքը նորից է գնահատում, ճանապարհի ապրանքների հաշուից հանւում է և գրւում է ապրանաց Դեբետին ամբողջովին:

6) ՀԱՇԻՒ ՇԱՀ ԵՒ ՎԱՍԱՐԻ:

Այս հաշիւր բացւում է մայր տոմարում, տարուայ վերջը, գրքերը փակելիս: Այս հաշուին են պատկանում բոլոր անդարձ ծախ-

սերը, որոնք կատարւում են առևտրի մէջ։ Ծախսերը զանազան տեսակի են լինում։ Նոքա առևտրի մէջ մեծ նշանակութիւն ունեն, ուստի իւրաքանչիւր ծախսի հաշիւր առանձին գիտենալ պէտք է։ Այդ հաշիւներն են՝ Ռոմիկների հաշիւր, Գրասենեակի ծախսեր կամ Առեւտրական ծախսեր, Անշարժ կայքերի շահագործումն, Կոմիսիօն (յանձնաբարական), Տոկոսներ, Կոլտաժ (միջնորդութեան վարձ), Տնային ծախսեր, Պատահական շահ եւ կորուտ և այլն։

Յիշեալ ծախսերից մնացորդներ են գոյանում, գրքերը փակելիս, Դեբետը կրէդիտից հանելով, կամ կրէդիտը Դեբետից գուրս գալով և անց են կացւում շահի կամ վնասի հաշուին։ Եթէ կրէդիտը Դեբետից աւել է, նշանակում է Շահ, եթէ Դեբետը կրէդիտից աւել է նշանակում է Վնաս։ Այս հաշուին է վերաբերում նաև այն շահն ու վնասը, որ ստացւում է զանազան գործողութիւններից՝ ապրանքի հաշուից, կասկածելի ստանալիքների հաշուից, բողոքուած մուրհակների հաշուից, ժամանակը անցած մուրհակների հաշուից, յանձնաբարական ապրանաց հաշուից և այլն։ Յիշեալ հաշիւներով շահ և վնաս որոշելը կատարուած է առանձին ցուցակով, որ կոչւում է «Շահ—Վնասի հաշուաբարութիւն»։ Այս ցուցակի հետ մենք մանրամասն կրծանօթանանք տարուայ վերջը «գրքերի ամփոփման» ժամանակ։ Առայժմ զբաղուենք յիշեալ հաշիւների մանրամասն քըննութեամբ։

Որոնիկներ:

Այս հաշուի Դեբետին գրւում է ծառայողներին տրուած ամսավարձը։ Տարուայ վերջը անցնում է վնասի հաշուին։

Առեւտրական ծախսեր։

Այս հաշուի Դեբետին գրւում են բոլոր այն ծախսերը, որոնք վերաբերում են առևտրին—գիլդիական և արդիւնաբերութեան վերաբերեալ վկայականների ծախսեր, փօստի, արքունական մարկաների, զրասենեակի պիտոյքների, վառելիքի և լուսաւորութեան։ Որովհետեւ ծախսերը զանազան են լինում և ամեն մի ծախս առանձնապէս հետաքրքում է գործատիրոջը, ուստի բացի այս ընդհանուր հաշուից, վատ չէր լինի մի առանձին տետրակ էլ ունենալ, և ամեն մի տեսակ ծախսի համար առանձին հաշիւր բանալ։ օրինակ՝ հաշիւր գրասենեակի պիտոյքների, հաշիւր բնակարանի վարձի և այլն։

Ընտանեկան ծախսեր։

Այս հաշուի Դեբետին գրւում են այն բոլոր ծախսերը, որ կատարում է գործատէրը կամ կատարում է նրա հաշուին։ Տա-

րուայ վերջը, գրքերը ամփոփելիս, այս ծախսերը վերաբերում են շահ և վնասի հաշուին, եթէ գործատէրը մէկ է, եթէ գործատէրերը մի քանի հոգի են, այսինքն ընկերութիւն է, այն ժամանակ իւրաքանչիւրի ծախսած գումարը գրւում է իր ամճնական հաշուին։ տարուայ վերջին այդ գումարները հանգչում են իրենց ստացած գիվիդենտով (օգուտ), իսկ եթէ տարուայ վերջը դիվիդենտի փոխարէն գէֆիցիտ (վնաս) ստացուի, այդ գէպքում ստացուած գումարները դուրս են դալիս իրենց գրամագլխից։

Անշարժ կայքերի շահագործումն։

Այս հաշուի դեբետը գրւում է պետական ու քաղաքային և այլ տուրքերը, հարկ-տուրքերը, բանկի տոկոսները, որ վճարում է անշարժ կայքի գրաւ գրուած լինելու համար և այն. կրեդիտ անցնում են այն գումարները, որոնք ստացւում են որպէս արդիւնք կայքից—տան, խանութների, պահեստների գրէններ և այլն։

Կոմիսիօն կամ՝ յանձնաբարական։

Այս հաշուի դեբետին գրւում են կօմիսիօններին վճարուած կօմիսօնը, կամ նրանց հասանելիքը։ Կրեդիտ—ուրիշներից հասանելիք կամ ստացուած կօմիսիօնը։

Կոլտաժ կամ՝ միջնորդչէք։

Այս հաշուի դեբետում գրւում են այն գումարները, որոնք տրուած են միջնորդներին (մակլերъ), որևէ առեւտրական գործողութեան համար, որ կատարում է նրանց միջնորդութեամբ։

Տոկոսներ։

Այս հաշուի դեբետում գրւում են այն տոկոսները, որ մենք վճարում ենք զանազան անձանց կամ բանկերին, մեր մուրհակները զեղջելու կամ այլ գործողութեանց համար, իսկ կրեդիտում գրւում են այն տոկոսները, որ ուրիշներից ստանում ենք նրանց մուրհակները զեղջելու կամ այլ գործողութեանց համար։

Պատահական շահ եւ կորուտ։

Այս հաշուի դեբետում գրւում են անսպասելի կորուտներ, գողացւած դրամը կամ ինչքը, զանազան բարեգործական հիմնարկութեանց բաշխուած գումարները և այլ անակնկալ ծախսերը։ Կրեդիտ գրւում են անսպասելի ստացուածներ, որպիսիք են՝ ընծաներ, խաղով տարուած, մի խօսքով այս հաշուին գրւում են բոլոր պատահական բնաւորութիւն ունեցող գործողութիւնները։

Բացի վերոյիշեալ հաշիւներից, հաշուապահը կարող է բացել ըստ իր հայեցողութեան, ուրիշ շատ հաշիւները էլ ի նկատի առնելով առեւտրի բնաւորութիւնը և տեսակը։

Տօնավաճառի ժամանակ բացւում է տօնավաճառի հաշիւ. ինչոր ուղարկւում է տօնավաճառ գրւում է տօնավաճառի հաշուի դեբետին—դրամ, ապրանք, արթէքաւոր թղթեր, մուրհակներ, նոյնպէս տօնավաճառ փոխադրուած պարտապահներ, նմանապէս զանազան ծախսեր, որ կատարւում են. իսկ կրեդիտ—այն ինչ որ վաճառւում կամ զնւում է տօնավաճառում, կամ յետ է ստացւում այնտեղից: Եթէ տօնավաճառի բոլոր հաշիւները անցնելուց յետոյ դեբետը կրեդիտից աւելանայ, նշանակում է տօնավաճառը մեղ վնաս է բերել, իսկ եթէ ընդհակառակն՝ կրեդիտն աւելանայ, նշանակում է տօնավաճառից շահ ենք ունեցել:

Այսպիսով, Մայր տոմարում բացւում են այն անունով հաշիւներ, ինչ անուն որ ունեն նոքա ժուրնալում՝ դեբետ և կրեդիտի գծերում:

Մայր տոմարի հաշիւների համար պահւում է առանձին գրքոյկ. կամ գրքի սկզբին և կամ վերջին շինուում է այբուբենական ցուցակ, ուր գրւում են հաշիւների անունները, նրանց բացելու ժամանակ: Հարկաւոր է ուշադիր լինել ցուցակի կանոնաւորութեանը, որպէսզի սխալմամբ մի հաշիւ մի քանի անգամ շբացուի մայր տոմարում:

ՐԵՍԿՈՆՏՐՈ (Զանազան անձանց հաշիւներ)

Ռեսկոնտրօ գիրքը առևտրական գործերի մէջ հարկաւոր է նախ այն պատճառով, որ միշտ անհրաժեշտ է գիտենալ իւրաքանչիւր անձի հետ մեր ունեցած հաշիւը, որովհետև մայր տոմարի մէջ բացւում է մի ընդհանուր հաշիւ՝ զանազան անձանց և այն էլ շատ կրծատ, և երկրորդ՝ որ հաշիւները մայր տոմար անցնում են գուցէ ամիսը մի անգամ, շաբթէ շաբաթ, մինչև իսկ ամեն օր, բայց րեսկոնտրօ պիտի գրուեն ամեն օր և մանրամասն, որպէսզի հնարաւոր լինի միշտ տեսնել մեր պարտքը և մեր ստանալիքը, և երրորդ, որ նա մեղ համար անհրաժեշտ գիրք է, և նրանից երբեմն հարկաւոր է լինում զանազան տեղեկութիւններ համել նոյն իսկ գործողութիւնը կատարելու միւս օրը, և այդ տեղեկութիւնը կարող են հանել ոչ միայն հաշուապահները, այլ և նրա օգնականները կամ գործակատարները: Եթէ րեսկոնտրօն չլինէր, հաշուապահը ստիպւած պիտի լինէր տեղեկութիւնները քաղել մայր տոմարից. տալ ուրիշին տոմարը նայելու չի կարելի, իսկ հաշուապահին յաճախ զբաղեցնել մանր քաղուածքներով—անյարմար է:

Մեծ գործերի մէջ հաշուապահի զբաղմունքի շատութեան պատճառով րեսկոնտրօն յանձնում է մի ուրիշին:

Ռեսկոնտրօյում բացւում են զանազան հաշիւներ այն անձանց, որոնց հետ մենք կապուած ենք որևէ պարտ ու պահանջի գործով: Ժուրնալից ամեն օր փոխադրում է այնտեղ այն ամենը, ինչ որ այդ անձերին է վերաբերում: Այդ անձանց հաշիւների դեբետին գրւում է այն, ինչ որ նրանք մեզ պարտ են լինում, կրեդիտ—ինչ որ մենք ենք պարտ նրանց: Ռեսկոնտրօյի համար հարկաւոր է առաջին այբուբենական ցանկը. ամեն անգամ, երբ հաշիւ է բացւում, պէտք է անցկացնել այդ ցանկը և հետեւ, որ ձիշտ գրուի: Նոր հաշիւ բացելիս ևս միշտ պէտք է նախ ցանկը նայել, որ միենոյն անձի հաշիւը, սխալմամբ, երկրորդ անգամ, չըբացուի: Դէպքեր են լինում, երբ րեսկոնտրօյում բացւում են հաշիւներ գործակատարի, կապալառուի, կառավարչի և կամ այն անձանց, որոնք առհաշիւ գումարներ են ստանում և պիտի այդ գումարները վերադարձնեն կամ նրանց ծախսելու մանրամասն հաշիւը տան: Այդօրինակ հաշիւների համար շատ անգամ ընդունուած է առանձին տետրակ պահել, անուաննելով նրան «Մատեան առհաշիւ գումարների» և այդ գիրքը գրւում է այնպէս, որպէս «Ռեսկոնտրօ»-ն:

ԱՊՐԱՆԱՑ ԳԻՐՔ

Առևտրական ձեռնարկութիւնների մէջ ինչքի մեծ մասը լինում է ապրանքը, որը շատ անգամ գործատէրի միակ կարողութիւնն է կազմում:

Ապրանաց քանականութիւնը շատ շուտ փոխութեան է ենթարկւում, որովհետև մի կողմից գնուում և վաճառւում է, ուստի այս գիրքը պէտք է առանձին զգուշութեամբ տանել, որպէսզի ամեն ժամանակ կարելի լինի որոշել գործի դրութիւնը, թէ որքան ապրանք է եղել գործի սկզբին, որքան է վաճառուել կամ որքան պիտի մնայ:

Ապրանաց գիրքը նրա համար է, որ նրա մէջ գրուեն—գնուած, վաճառուած և ուրիշ տեղ ուղարկուած ապրանքները, գլխաւորապէս նրա համար, որ միշտ հեշտ լինի որոշել, թէ որ տեսակի ապրանքից և որքան կայ իսկապէս խանութում կամ պահեստում: Եթէ ապրանքը գտնուում է զանազան շինութիւնների մէջ և այդ շինութիւնները իրարից բաժանուած են, այն ժամանակ ամեն մի շինութեան ապրանաց համար առանձին ապրանաց գիրք պէտք է պահուի:

Ապրանաց գիրքը գրւում է երկու հակառակ երեսների վրայ. ձախ կողմում գրւում է Մուտք, աջումը Ելք, վերնագրում ապրանքի անունը: Այս գրքում իւրաքանչիւր առարկայի համար առանձին հաշիւ է բացւում և նշանակում է առարկայի տեսակը, նոյնպէս և չափան ու որակը, իսկ մայր տոմարում բացւում է միայն մի ընդհանուր հաշիւ՝ ապրանաց հաշիւ:

Ապրանաց գրքի մուտքում գրւում են արդէն ստացուած ապրանքները և նրանց վրայ եղած ծախսերը, իսկ ելքում—վաճառքը՝ տօնավաճառ կամ ուրիշ քաղաք ուղարկուածները:

Ապրանաց գրքի մէջ գործողութիւնները գրւում են համաձայն ժուրնալի յօդուածների, թէ ումնից է գնուած կամ ստացուած, ում է վաճառուած կամ ուղարկուած, առանց մանրամասն զրելու թէ ինչ պայմանով է գնուած կամ վաճառուած, պայմանների մասին յիշատակել աւելորդ է այն պատճառով, որ ապրանաց գրքով որ և է հաշիւ չէ տեսնուում վաճառողների կամ գնողների հետ. այդ գիրքը մեզ ցոյց է տալիս գնուած—վաճառուածի և մասցորդի քանակութիւնը, իսկ անձանց հետ հաշիւ տեսնելու համար գոյութիւն ունի մի ուրիշ գիրք «Բեսկօնտրօ» անուաննեալը, որի հետ արդէն ծանօթացել ենք:

Յատուկ տողերում գրւում են, թէ որ թուին, ամսին և օրը ապրանքը գնուած կամ վաճառուած է. նրա քանակութիւնը, բրուտոն, տարան, նետտօն, արժէքը, չափու և գումարները: Այսպիսով, այսպէս անուանուած առարկայական սիստեմով պահուած ապրանաց գրքով գժուար չէ պարզել ամեն մի կորուստ, պակաս կամ զողացուած, և որ գլխաւորն է կարելի է, գիտենալ թէ որ տեսակի ապրանք է կորել կամ պակասել: Հեշտ է որոշել նմանապէս և իւրաքանչիւր տեսակի ապրանքից ստացուած շահ և վնասը. այս հանգամանքին պիտի կարևոր նշանակութիւն տալ:

Թէպէտ մայր տոմարում բացւում է մի ընդհանուր հաշիւ, սակայն այդ հաշիւը մեզ մանրամասն տեղեկութիւն տալ չէ կարող, այլ միայն ցոյց կըտայ ընդհանուր թուերով ամբողջ ապրանաց գումարը և ամբողջ շահ և վնասը: Մայր տոմարի գերեա և կրեղետը պիտի հաւասար լինին ապրանքի մուտք և ելքին: Գրքի սկզբում կամ վերջում գրւում է այբուբենական ցանկը, որով բացւում են հաշիւները: Կարելի է ցանկը առանձին տետրակով ունենալ:

Ապրանաց գրքում գրւում են, առանց բացառութեան, բոլոր ապրանքները, որ վաճառման համար են, իրենց արժէքներով. Եթէ ապրանքի արժէքը որոշուած չէ թէպէտ և ապրանքը ստացուած է, այն ժամանակ նա գրւում է, ժամանակաւորապէս մի առանձին գրքում, որ կոչւում է հաշուարարութեանց գիրք (калькуляցіонная

книга), մինչև որ այդ ապրանքի ֆակտուրան և ծախսերի հաշիւն ստացուին:

Ապրանաց գիրքը բացւում է համաձայն ինվէնտարի ակտիւում ցոյց տուած մնացորդ ապրանաց, իւրաքանչիւր ապրանքի համար առանձին երեսում. գրուած ամեն մի գործողութեան հիմքն է ժուրնալը, որտեղ իւրաքանչիւր գումարի, վաճառման գործողութեան մասին համապատասխան յօդուած է կազմւում:

ԱՐԺԵՔԱԽՈՐ ԹՎՅԹԵՐԻ ԳԻՐՔ (Փոնդօայ)

Արժեքաւոր թղթեր ասելով մենք հասկանում ենք առհասարակ տոկոսաբեր թղթեր, մասնաւորապէս այն տոմսակները, որ կառավարութիւնը բաց է թողնում զանազան անուններով, որոնք են՝ խաղարկութեան տոմսեր, բէնտաներ, օրլիգացիաներ և այլ թղթեր, որոնք տալիս են որոշ և անփոփոխ տոկոսներ:

Արժեքաւոր թղթերի գիրքը այլապէս կոչւում է տոկոսաբեր թղթերի գիրք: Նա այնպէս է գրւում, որպէս ապրանքինը, այսինքն իւրաքանչիւր տեսակի թղթի համար առանձին երես է բացւում և նշանակութեան տոմսեր, բէնտաներ, ոմինալ և կուրսի արժէքն ու գումարը, թղթերի ստացուելը կամ մուտք ու ելքը և կտրոններով տոկոսներ ստացուելը. Պարզ ասելով, այնտեղ գրւում է այն, ինչ որ ցոյց է տալիս տոկոսաբեր թղթերի հաշիւը ժուրնալում:

Մայր տոմարում բացւում է մի ընդհանուր հաշիւ արժեքաւոր կամ տոկոսաբեր թղթերի, որի մուտքի և ելքի գումարները պիտի հաւասար լինին արժէքաւոր թղթերի մուտք և ելքին: Գրքի սկզբում կամ վերջում գրւում է այբուբենական ցանկը, որով բացւում են հաշիւները: Կարելի է ցանկը առանձին տետրակով ունենալ:

ՄՈՒՐՃԱԿՆԵՐԻ ԳԻՐՔ

Մուրհակների գիրքը ծառայում է մուրհակների մուտք ու ելքի արձանագրութեան և նրանց քանակութիւնը որոշելու համար: Առհասարակ մի գրքում տեղաւորուած են լինում երկու մասերը, վճարելի (Ремесса) և գանձելի (Тратта) մուրհակներ, առաջինում գրւում են ստացուած մուրհակները, իսկ երկրորդում՝ տրուած: Վճարելի և գանձելի մուրհակների գրքում գրւում են դօկումենտների տեսակները կարգով, նրանց համարները, բէնտարը, ուր նոքա նշանակուում

են, թէ երբ և ինչ ժամանակով է տրուած մուրհակը, մուրհակ տուողների, ստացողների և բլանկ դնողների անուն և ազգանունները, մուրհակների ժամանակը, վճարման տեղը, գումարը և վերջապէս ծանօթութիւն, ուր նշանակուում է փող ստանալը, գեղջելը կամ բռդոքելը:

Այս գիրքը, մայր գրքի վճարելի և գանձելի մուրհակների քանակութեան ստուգողի դերն է կատարում: Իւրաքանչիւր ամսի և տարուայ վերջը, ինչպէս մուրհակի գրքի և մայր տոմարի մէջ, մուրհակների մնացորդը և նրանց գումարը պիտի հաւասար լինեն:

Ժուրնալից ամեն օր մուրհակին վերաբերեալ յօդուածները պէտք է անմիջապէս անցկացնել մուրհակի գիրքը, որոնք պիտի դասաւորուած լինեն կարգով. ժամանակները որոշելու համար պիտի պահել առանձին գիրք—զիրք պայմանաժամի:

Պայմանաժամի զիրք: Պիտի վերցնել նեղ տետրակ, վերնագրի երկու կողմն էլ նշանակել տարին և ամսութ: Զախ երեսում գրել գանձելի մուրհակների պայմանաժամը, նշանակելով թէ որտեղ և ում մօտ են գանւում նոքա, մուրհակ տուողի անունն ու ազգանունը և գումարը, իսկ աջ կողմում վճարելի մուրհակները, նոյնպէս նշանակելով ում մօտ գտնուելը, մուրհակ ստացողի ազգանունն ու գումարը: Վճարելու կամ ստանալու գէպքում գումարը ջնջում է մատիտով կամ թանաքով, կամ գումարի մօտ մի գիծ է գրւում ստանալը կամ վճարելը նշանակելու համար:

Իւրաքանչիւր ամսի սկզբին պէտք է ուշադրութեամբ նայել, թէ արդեօք ամբողջ ամսում բոլոր մուրհակները անցած են և ոչինչ բաց թողնուած չէ, արդեօք, մուրհակի և պայմանաժամի գրքում:

Պայմանաժամի գրքում, բացի մուրհակներից, կարելի է գրել նաև ուրիշ տեսակի պարտաթղթեր, միայն այնպէս, որ դոքա մուրհակներից որևէ նշանով զանազանուեն:

Դ Ր Ա Մ Ա Ր Կ Ղ

Իրամարկղի գիրքը ծառայում է կանխիկ դրամի մուտքն ու ելքը, կամ ստացուածն ու վճարուածը արձանագրելու համար: Իրամարկղը բացւում է ինվէնտարի մէջ, ակտիւում ցոյց տուած կանխիկ դրամի մնացորդով: Իրամարկղի գիրքը գրւում է երկու հակառակ երեսների վրայ. ձախում գրւում է Մուտք, աջում՝ Ելք: Իւրաքանչիւր երեսում, ձախ կողմի առաջին տողում, գրւում է

միսը և թիւը. առաջին երկու տողերում գրւում են ամենօրեայ կատարած գործողութեանց գումարները. վերջին երկու տողերում ամբողջ ամսուայ գումարը, իսկ վերնագրում նշանակւում է ամիսը: Մուտքում գրւում են ստացուած գումարները, Ելքում արուած: Իւրաքանչիւր ստանալիք կամ վճարելիք կատարւում է գանձապահի կամ այն անձի ձեռքով, որին յանձնուած է գրամարկղը, և մուտքի կամ ծախսի այն հրամանով, որ պիտի ունենայ հաշուապահի, գործատիրոջ կամ նրա հաւատարմատարի ստորագրութիւնը, իսկ տալուները (հրամանի առաջին մասը) պիտի մնան հաշուապահի մօտ:

Իրամը ստանալուց կամ վճարելուց յետոյ, գանձապահը իրեն տուած հրամաններով գրվում է գրամարկղի գիրքը, իսկ հաշուապահը իր մօտ մնացած կտրոնով անց է կացնում ժուրնալը:

Որպէսզի տարածայնութիւններ և սխալներ չը պատահեն, գանձապահը, մինչև որ իրան տուած հրամանը չանցկացնէ գիրքը, չը պիտի դրամ ստանայ կամ վճարէ: Իրամարկղ պահողը իրաւունք չունի իր սեփական դրամը կամ նրան պահ տուած փողերը խառնել գործատիրոջ փողերի հետ:

Երբ երեսները լցուում են, վերջին տողերում գրւում են երեսների գումարները, որոնք միաժամանակ փոխանցուում են միւս երեսը, նոյն իսկ այն դէպքում, եթէ մի երեսի վրայ շատ քիչ բան գրվուած լինի կամ ոչինչ գրվուած չըլինի: Վերջին դէպքում պէտք է չըլգրուած երեսը թեք տողով գծել: Թէ մուտքի և թէ ելքի փոխանցումները գրւում են միւս երեսի հէնց առաջին տողում, ծառայելով, կարծես, որպէս վերնագրեր գրուելիք հետևեալ գործողութեան համար: Նոյն տեսակ են արևում բոլոր փոխանցումները այն գրքերում, որոնք գրւում են երկու հակառակ երեսների վրայ:

Իւրաքանչիւր ամսի վերջը գրամարկղը փակւում է, այսինքն իւրաքանչիւր ամսի սկզբին հաշուում է նախընթաց ամբողջ ամսուայ մուտք և ելքը, հանւում է ելքը մուտքից. տարբերութիւնը ներկայացնում է կանխիկ դրամի մնացորդը առ ամսի մէկը: Գրքի մնացորդը պիտի ստուգել դրամի մնացորդի հետ, եթէ առաջնի գումարը հաւասար է երկրորդին—նշանակում է գրամարկղը ճիշտ է: Ապա մնացորդը գրւում է ելքում, որպէսզի մուտք ու ելքը հաւասարակշռուեն և նրանց տակը գծւում է կրկնակի գծով, որ նշանակում է թէ գրամարկղը փակուած է: Ելքում, հաւասարակշռութեան համար գրվուած մնացորդները անց են կացւում միւս ամսին և գրւում են որպէս մուտք ամսի սկզբին և բոլոր գոկումնենաները,

որոնք վերաբերում են դրամարկղին, բացի հրամաններից, տրւում են հաշուապահին, որը կցում է նրանց գործերին:

Դրամարկղի գրքի ցոյց տուած մնացորդը (салъдо) միշտ էլ հաւասար չէ լինում կանխիկ դրամի մնացորդին. Երբեմն գրքում մնացորդը աւելի քիչ է երեսում քան իսկական դրամը: Եթէ իսկականից քիչ է, նշանակում է ելքում մի որևէ յօդուած մոռացուած է կամ վճարելու ժամանակ աւել է տրուած. Եթէ իսկականից աւել է, նշանակում է սպրդել է որևէ սխալ: Որպէսզի կարելի լինի գրտնել այդ սխալը, գանձապահը պէտք է մուտքի և ծախսի բոլոր հրամանները քննէ, նոյնպէս ստուգէ հաշուապահի գրքի հետ, որտեղ գրուած են հրամանների պատճէնները: Յաճախ պատահում է պակաս, քան աւելի կանխիկ դրամի: Եթէ պակասորդը անշան է և ոչ մի աշխատանքով գտնել չի լինում, գանձապահը լրացնում է պակասորդը, իսկ եթէ պակասորդը մեծ թիւ է, այն ժամանակ գանձապահը գիմում է գործատիրոջը, և այս վերջինից է կախուած կամ այդ գումարը գրել գանձապահի հաշուին կամ ընդունել իր հաշուին: Այսպէս թէ այնպէս, գրքի մնացորդի և իսկականի տարբերութիւնը պիտի վերանայ: Դրամարկղի գրքում նշանակում են հրամանների համարները կամ ժուրնալի յօդւածի համարը. հրամանների համարներն այն ժամանակ են նշանակում, երբ գիրքը գրում է ինքը գանձապահը, իսկ մենք կը նշանակենք միայն ժուրնալի համարները:

Սրանով մենք վերջացնում ենք հաշուապահական գրքերի բացատրութիւնը և անցնում ենք երկու այլ գրքերի, որոնք իրենց տեսակով և բնաւորութեամբ վերաբերում են դրասենեակի գրագրութեանց և ընդունուած են ամեն մի բարեկարգ առևտրա-արդիւնաբերական գրասենեակում: Դոքա են՝ պատճէնների գիրքը և թղթատարը:

Պ Ա Տ Ճ Է Ն Ի Գ Ի Ռ Փ

Պատճէն խօսքը արդէն ցոյց է տալիս գրքի գերը: Առևտրական աշխարհում, բոլոր առևտրական նամակները կարեոր նշանակութիւն ունին այն պատճառով, որ նոքա փոխարինում են նօտարի ձեռքով կապուած պայմաններին կամ երդուեալ միջնորդներից հաստատուած թղթերին: Ուրեմն, այսպիսի լուրջ նշանակութիւն տալով նամակներին, ամեն մի ֆիրմա կամ վաճառական, ինամքով պէտք է պահէ թէ մտած և թէ ելած նամակները:

Գրուած կամ ելած նամակների, հաշիւների և հեռագրերի բովանդակութիւնը պահելու համար ընդունուած է նրանց պատճէնը հանել: Բոլոր այդ պատճէնները հաւաքուած են պատճէնի գրքում, որի երեսները համարագրուած են առաջնից մինչև վերջինը: Պատճէնի գիրքը փոխարինում է նաև ֆակտուրի կամ դուրս եկած ապարանաց հաշուէտեարի ու զեղջման ու վաճառման հաշիւներին: Այն նամակները և թղթերը, որոնց պատճէնները պիտի հանուեն, գրում են «պատճէնի սեւ թանաքով», ապա պատճէնի ճնշման մեքենայով ստացւում է մի, կամ ըստ ցանկութեան, մի քանի պատճէնները: Այսպիսի գիրք ունենալը հեշտացնում է հարկաւոր տեղեկութիւններ գտնելը այս կամ այն նամակի, ֆակտուրի, հեռագրի, կամ այլ թղթերի: Հէնց այս նպատակով էլ գրքի վերջը այբուբենական ցանկ կայ, որտեղ նշանակում են այն անձանց ազգանունները, որոնց ուղարկուած են նամակները:

Այսպիսով, պատճէնի միջոցաւ հնարաւոր է լինում պահել առևտրական բոլոր գործողութեանց հետքը:

ԹՂԹԱՏԱՐ ԿԱՄ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆ

Թղթատարը այն գիրքն է, որտեղ ստորագրում են՝ առևտրարինաբերական գրասենեակից նամակներ, հաշիւներ և այլ թղթեր ստացողները:

Այս գիրքը հարկաւոր է ունենալ. սրանով հեռացւում են այն խոչընդուները, որ առաջ են գալիս ուղարկուած որևէ թուղթ չըստանալու պատճառով:

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԽԱՇՈՒՄԱՏԵԱՅԻՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ

ՅՈՒՌԱԾՆԵՐԸ ԳՐՔԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԻՍՏԵՄԸ ԵՒ ԵՂԱՆԱԿԸ:

Վերը ասուած է, որ մի որևէ գործողութիւն կատարելիս պէտք է ամենից առաջ ժուրնալում յօդուած կազմել, նշանակելով դեբետ և կրէդիտը: Որովհետև ժուրնալը այն աղբիւրն է, որից միւս գրքերը տեղեկութիւններ են առնում, ուստի կարեոր է պարզել, թէ որպէս կամ ինչ կարգով են յօդուածները ժուրնալից անցնում այլ գրքերը: Անցնելով այս խնդրին, աւելի պարզը ցոյց տալու համար, անհրաժեշտ է վերցնել մի քանի օրինակներ առևտրական կեանքից և

Նրանցով պարզել մեղ հետաքրքրող խնդիրը՝ յօդուածները՝ գրքերն անցնելլ:

1) 5 Յունուարի. Մենք ստացանք Ա. Ի. Խուբլարեանից, փոխարինաբար, 3500 ըուբլի:

2) 12 Յունուարի. Մենք գնեցինք Վ. Ա. Եղիազարեանից, 6 ամիս ժամանակով № 27/91 65 պարկ Սուրճ Մօկկօ

Բ-տո. 234 ֆ. 00 ֆ.

Տ. 9 » 30 »

Ն-տո. 224 ֆ. 10 ֆ. ձ 23/50 = Ը. 5269.87 կ.:

3) 25 Յունուարի. Վճարուած է Վ. Ա. Եղիազարեանից, նրանից գնուած ապրանաց հաշուով՝

Կանկիկ դրամով 269.87

Մուրհակով ս/ա. 12-ից, 6 ամիս ժամանակով, 5000.00 5269.87

Ամենից առաջ, այս օրինակների համար յօդուածներ կազմենք ժուրնալում: Մեր առաջարկած ժուրնալի սիստեմով հարկաւոր չէ առաջուայ դեբետ և կրէդիտը որոշել: Առաջ ժուրնալ կազմենք, մանրամասն գրելով յօդուածի բովանդակութիւնը, «Դօկումենտների բովանդակութիւնը» գծում, ապա գտնենք դեբետ և կրէդիտը, ուրոնք մեղ ցոյց են տալիս ինչ անձանց կամ հաշիւների մէջ է կատարուել այս կամ այն գործողութիւնը:

Ժուրնալի մէջ գրւում են այդ օրինակները հետևեալ կարգով.

Յունուար ամիս

| | | 5 | | | | | |
|---|--|---|--|------|------|------|----|
| 1 | | Ստացուած է Ա. Ի. Խուբլարեանից, փոխարինաբար . . . | | | 3500 | 00 | |
| 2 | | Գնուած է Վ. Ա. Եղիազարեանից, աստ, 6 ամիս ժամանակով № 27/91 65 պարկ Սուրճ Մօկկօ Բ-տո. 234 ֆ. 00 ֆ. Տ. 9 » 30 » | | | 5269 | 87 | |
| 3 | | Վճարուած է Վ. Ա. Եղիազարեանից, աստ, նրանից գնուած ապրանաց հաշուով՝ Կանկիկ դրամով Մուրհակով, ս/ա. 12-ից 6 ամիս ժամանակով | | 269 | 87 | | |
| | | <hr/> | | 5000 | 00 | 5269 | 87 |

Նախ քան այս յօդուածները Մայր տոմար և օժանդակ գրքերն անցնելը, անհրաժեշտ է առաջ որոշել դեբետ և կրէդիտը, նշանակել նրանց ժուրնալի ձախ կողմի տողերում, որպէսզի նոյն անուններով հաշիւներ բաց անել գրքերում և դեբետի ու կրէդիտի գումարները անցնել իրենց համապատասխան հաշիւների դեբետ և կրէդիտում:

Անցնենք դեբետ և կրէդիտը գտնելու խնդրին: Ի՞նչ է մեղ մօտ ստացւում է դրամ 350 ըուբլի. նշանակում է դրամը, որ մեղ մօտ մտնում է, պէտք է գրուի դրամարկղի հաշուելու արամագրութեան տակ, հետևապէս դեբետը կըլինի դրամարկղը: Ո՞վ է տալիս մեղ այդ դրամը.— Ա. Ի. Խուբլարեանը. նշանակում է կրէդիտը կըլինի Զանազան անձինք: Զանազան անձանց հաշիւ ասելով հասկանում ենք բոլոր անձնական հաշիւները: Երկրորդ յօդուածում— Ի՞նչ է մեղ մօտ ստացւում, ապրանք. Ո՞վ է տալիս— Վ. Ա. Եղիազարեանցը. կրէդիտը կըլինի Զանազան անձինք: Երրորդ յօդուածում: Ո՞վ է ստանուալ— Վ. Ա. Եղիազարեանը— դեբետ՝ Զանազան անձինք: Ի՞նչ է մեզնից դուրս գալիս— դրամ 269,87 կ. և մեր մուրհակը 5000 ըուբլու. հետևապէս այդ յօդուածում երկու պարտատէրեր են— դրամարկղը՝ 269. 87 կ. և վճարելի մուրհակները— 5000 ըուբլի: Վերջին յօդուածը կոչւում է ըարդ յօդուած, որովհետ մի դեբետին երկու կրէդիտ կայ:

Կազմենք այժմ նոյն ժուրնալը միենոյն բովանդակութեամբ, միայն աւելի ընդարձակ կերպով դեբետը և կրէդիտը նշանակելով:

Յունուար ամիս 1911 թ.

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---------|----------|------------------|--------|--|---------------------------|----------|-----------|
| Ժ. յու. | Դեբետ | Մ. | Կրէդիտ | Մ. | ԴՕԿՈՒՄԵՆՏ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ | Մասնաւոր | Ընդհանուր |
| 1 | Դրամարկղ | 1 Զանազան անձինք | 2 | Ստացուած է Ա. Ի. Խուբլարեանից, փոխարինաբար . . . | | 3500 | 00 |
| 2 | Ապրանք | 3 Զանազան անձինք | 2 | Գնուած է Վ. Ա. Եղիազարեանից, աստ, 6 ամիս ժամանակով՝ № 27/91 65 պարկ Սուրճ Մօկկօ Բ-տո. 234 ֆ. 00 ֆ. . . Տ. 9 » 30 » . . . | 12 | 5269 | 87 |

| | | | | |
|--------------------|---|----|--|-----------------|
| 3 Զանագ. անձինք | 2 | 25 | Վճարուած է վ. Ս. Եղիազարեանին, աստ, նրանից գնուած ապրանաց հաշուով՝ կանխիկ դրամով | 269 87 |
| Դրամար. | 1 | 4 | Մուլհակով ս/ա. 12-ից, 6 ամիս ժամանակով | 5000 00 5269 87 |

Մեզ յայտնի է, որ ժուրնալից առաջ անցնում են օժանդակ գրքերը և ապա Մայր տումարը, ուստի բացենք մեր օժանդակ գրքեր՝ Դրամարկոյի, Ռեսկոնտրոյի, Ապրանաց եւ Մոլհակի գրքերը և անցկացնենք յօդուածները։

ԴՐԱՄԱՐԿՈՅԻ ԳԻՐՔ

| Մուտք | Ծունդուար 1911 թ. | Ելք |
|---|-------------------|---|
| 5 Ս. Ի. Խուրլարեանից, փոխարինաբար . . . | 13500 00 | 25 Վճարուած է վ. Ս. Եղիազարեանին, ի հաշիւ նրանից գնուած ապրանաց 3 269 87 |

Այս գիրքը գրւում է, որպէս վերը ցոյց տուինք, երկու հակառակ երեսների վրայ. ձախի վրայ Մուտքը, աջի վրայ ելքը։ Զախ երեսում մենք մուտք ենք գրում 3500 ր. գումարը այն պատճառով, որ նախ այդ ցոյց է տալիս կատարուած փաստը և երկրորդ այն պատճառով, որ ժուրնալի 1-ին յօդուածում դրամարկոյը գրուած է դերետի տակ։ Աջ երեսում մենք ձախք կամ ելք գրեցինք 269,87 կ., որովհետև դրամարկոյը ժուրնալով գրուած է կրէդիտի տակ, 3-րդ յօդուածում. իւրաքանչիւր գումարից առաջ մենք զնենք ժուրնալի համարները. մուտքում՝ 1-ին գումարի դէմ, ելքում՝ 3-րդ գումարի դէմ։ Կարելի է նաև նշանակել և հրամանների համարներ։

Հրամանների սիստեմը ընդունուած է բոլոր բարեկարգ գրասենեակներում, մանաւանդ այն ժամանակ, երբ դրամարկոյը կառավարում է առանձին անձն։

Առաջ ենք բերում այստեղ հրամանի ձեր։

ՄՈՒՏՔԻ ՀՐԱՄԱՆ

| |
|---------------------------|
| Թիֆլիս, «.....» 191 . թ. |
| Տալրն հրամանի Նո |
| ԲՈՒԲԼԻ |
| Ի հաշիւ |
| Ստացուած է |
| ԲՈՒԲԼԻ |
| Հաշուապահ (ստորագրութիւն) |

ԴՐԱՄԱՐԿՈՅԻ ԳԻՐՔ

Թիֆլիս, «.....» 191 . թ.

ՀՐԱՄԱՆ №

ԲՈՒԲԼԻ

Ի հաշիւ

Ստացէք

և նշանակեցք մուտք։

Հաշուապահ (ստորագրութիւն)

ԵԼՔԻ ԿԱՄ ԾԱԽՖԻ ՀՐԱՄԱՆ

| |
|---------------------------|
| Թիֆլիս, «.....» 191 . թ. |
| Տալրն հրամանի Նո |
| ԲՈՒԲԼԻ |
| Ի հաշիւ |
| Վճարուած է |
| ԲՈՒԲԼԻ |
| Հաշուապահ (ստորագրութիւն) |

ԴՐԱՄԱՐԿՈՅԻ ԳԻՐՔ

Թիֆլիս, «.....» 191 . թ.

ՀՐԱՄԱՆ №

ԲՈՒԲԼԻ

Ի հաշիւ

Վճարեցէք

ԲՈՒԲԼԻ

և նշանակեցք ելք։

Հաշուապահ (ստորագրութիւն)

Այս դրամարկոյի մուտքի և ելքի հրամանները տպագրուում են գունաւոր թղթերի վրայ, որպէսզի միմիանցից կարելի լինի զանազանել։ Մեծ մասամբ ընդունուած է, Մուտքի հրամանը կարմիր թղթերի վրայ տպագրել։ Ելքինը—սպիտակի։ Հրամանները, ինչպէս երեսում է ցոյց տուած օրինակներից, բաղկացած են երկու մասերից, որոնցից մինը կոչւում է Հրաման, միւսը Հրամանի տալօն։

Հաշուապահը հրամանը կտրում ու տալիս է գանձապահին ի կատարումն, իսկ տալոնը մնում է հաշուապահի մօտ, ժուրնալու յօդուած կազմելու համար։

Անցկացնենք միևնույն երեք յօդուածները Ռէսկոնտրօ։

Այս յօդուածները պէտք է Ռէսկոնտրօ էլ անցնեն, որովհետեւ

բոլոր երեք յօդուածներումն էլ մասնակցում են զանազան անձինք,
որոնց հետ մենք գործ ունենք:

ԲԵՍԿՈՆՏՐՈ (Ժուրնալի 1-ին յօդուած)

Դեբետ Ա. Ի. Խորլարեան, աստ, կըէղիտ

| | | | | | | |
|--|--|--|-------|---|---|---------|
| | | | Յուն. | 5 Դրամարկղից. Մտացուած է նրանից փոխարինաբար . . . | 1 | 3500 00 |
|--|--|--|-------|---|---|---------|

Բանալով բեսկօնտրօյի առաջին երեսը, մենք անց ենք կացնում ժուրնալի առաջին յօդուածը՝ Ա. Ի. Խորլարեանի կրէղիտը՝ 3500 ըուբլի: Այս գումարը մենք կրէղիտ ենք գրում այն պատճառով, որ նախ Զանազան անձինք գտնում են ժուրնալի առաջին յօդուածի կրէղիտի տողում, որը ցոյց է տալիս, թէ իսկապէս կրէղիտ էլ պէտք է գրել, երկրորդ՝ ժուրնալի յօդուածի բովանդակութիւնից երեսում է, որ Խորլարեանը տուել է մեր դրամարկղին այդ գումարը փոխարինաբար, ուրիշ խօսքով՝ Խորլարեանը ունի մեղնից ստանալիք: 1-ին թուանշանը, որ գրւում է գումարից առաջ, նեղ տողում, ցոյց է տալիս ժուրնալի յօդուածի համարը:

Անցկացնենք այժմ ժուրնալի երկրորդ և երրորդ յօդուածները նոյն բեսկօնտրօյի մէջ:

Դեբետ Վ. Եղիազարեան, աստ, կըէղիտ

| | | | | | | |
|-------|--|--------|-------|--|---|---------|
| Յուն. | 25 Զան. պարտատ. Վճարուած է նրան հաշուով՝ կանխիկ Մուրհակով ս/ա. 12-ից, 6 ամիս ժամանակով | 269 87 | Յուն. | 17 Ապրանքից Գնուած է նրա- նից 6 ամիս ժա- մանակով Հ. 27/91 65 պարկ Մուրճ Մօկո Բ-տո 234 դ.00դ. Տ. 9 » 30 » Ն.տո 224 դ.10դ. 23/50 | 3 | 5269 87 |
|-------|--|--------|-------|--|---|---------|

Յիշեալ հաշուից երեսում է, որ մենք անցկացրինք ժուրնալի երկու յօդուածները միասին, որովհետև ժուրնալի երկրորդ յօդուածի կրէղիտի Զանազան անձինք ցոյց են տալիս, որ մենք գործ ունինք միևնոյն

անձի՞ Վ. Եղիազարեանի հետ: Մի դէպքում մենք տեսնում ենք, որ Յունուարի 12-ին գնել ենք նրանից ապրանք և փող չենք վլաճարել, ուստի գրել ենք նրա հաշուի կրէղիտին որովհետև նրան չեն վճարել, ապա գրել ենք ապրանաց գերետին, նշանակում է ապրանքը պարտ է նրան 5269 ր. 87 կ. Եթէ ապրանքը պարտ է նրան, այդ չէ նշանակում, որ Եղիազարեանը պարտաւոր է սպասել մինչև այն ժամանակ, որ նրանց գնուած ապրանքը վաճառուի և ապա նրան վճարուի: Ապրանքը կարող է մի քանի տարի անվաճու մնալ, բայց հաշիւը պէտք է վերջացնել: Միւս դէպքում մենք տեսնում ենք, որ 25-ին Յունուարի հաշիւը նրա հետ վերջացնում ենք: Վճարելով նրան, նրանից գնուած ապրանաց համար կանխիկ դրամով 269 ր. 87 կ., իսկ մնացած մասի համար տալով մեր մուրհակը, 6 ամիս ժամանակով՝ 5000 ըուբլու, որոնք և գրւում են նրա հաշուի գերետին, որով և նրա հաշիւը փակւում է:

Բովանդակութիւնից առաջ գերետում գրուած է Զանազան պարտատէրերից—նշանակում է զանազան պարտատէրերի հաշուից: Դա նոյն է եթէ մենք երկու անգամ գրէինք Դրամարկղից—վճարուած է նրան 269 ր. 87 կ. և վճարելի մուլհակների հաշուից տրուած է նրան մուրհակ՝ 5000 ըուբլու: Այդ հաշիւներից խուսափելու համար մենք կրծատում ենք՝ «Զանազան պարտատէրերից»: Բովանդակութեան այսպիսի ձևաւորումն մեզ միանգամայն գոհացնում է և ցոյց է տալիս այն, ինչ որ իսկապէս կատարուել է:

Գումարից առաջ նեղ տողում, գերետում 3 թուանշանը և կրէղիտում 2 թուանշանը ցոյց են տալիս ժուրնալի յօդուածների համարները:

ԱՊՐԱՆԱՑ ԳԵՐԵ

Մուտք Խողովակ Անդրեան թ. Ճ՛.

| Ամիս | թ. | Յուն. | Գագակ | | Ապր. | Թուան | Ամիս | թ. |
|-------|----|-----------------------|-------|-----|------|--------|------|----|
| | | | ֆ. | դ. | | ֆ. | դ. | |
| Յուն. | 12 | Վ. Եղիազարեանից, աստ. | 2 | 150 | 2250 | 6 2/50 | 5626 | 25 |

Ununp

g - b u t a n

| Ա. միւթ. | Ժ. | Ժ. | Ժ. | Ժ. | Ժ. | Ժ. | Ժ. |
|----------|----|--------------------------|----------|---------|---------|--------|----|
| Յուն. | 12 | Ա. Վ. Եղիազար- բեանից | 2 | 5 25 00 | 8 / 00 | 200 00 | |
| | | | Ժ. յութ. | Ժ. աշխ. | Ժ. աշխ. | Գումար | |
| | | | լ. | կ. | դ. | լ. | |
| | | | | | | | |

Ժուրնալի յօդուածը մենք ահցկացրինք ապրանաց գրքի Մուտքը, որովհետև ժուրնալում նշանակուած էր դեբետ։ Այս գրուածով չի կարելի, ի հարկէ, իմանալ ապրանքը կանխիկ է գնուած, թէ ժամանակով իսկապէս հարկաւորութիւն էլ չըկայ դրան, որովհետև ապրանքի գիրքը, ինչպէս մենք վերը ասացինք, ապրանաց մուտք ու ելքի հաշիւը գիտենալու համար է և ոչ թէ անձանց հետ հաշիւ տեսնելու. վերջինիս համար կայ ուրիշ գիրք՝ Ռէսկօնտրօ:

Յամենայն դէպս, այս վերջին տեղեկութեանց համար պէտք է դիմել ապրանտց գրքի առաջին տողին, որտեղ նշանակուած է ժուր-նալի յօդուածի համարը, որով կարելի է տեղեկանալ ապրանտց գնման և վաճառման մասին մանրամասնաբար, թէ կանխիկ է գը-նուած կամ ժամանակով։

Դիմելով ժուրնալի Յ-րդ յօդուածին, մենք տեսնում ենք, որ նա իր ընաւորութեամբ ու բովանդակութեամբ պիտի անցնի մուրհակների գիրքը: (Զե 43-րդ երեսում):

Այս գիրքը ծառայում է, որպէս վերը ասուած է, այսպէս անուանուած ըիմէսաների (գանձելի մուրհակներ) տրատուաները (վճարելի մուրհակներ) զրելու համար:

Ներկայ դէպքում մենք բացում ենք մուրհակների գրքի վճարելի մուրհակների երեսը և համաձայն ժուրնալի Յ-րդ յօդուածի, մտցնում ենք Վ. Ս. Եղիազարեանին տուած մուրհակը № 1-ով։ Այս գրքում յօդուածը գրւումէ համաձայն իսկական դօկումենտի. գրքում նշանակելուց յետոյ, մուրհակի վրայ նշանակւում է պայմանաժամը և համարը։ Այդ նկատողութիւնները ընդունուած է կարմիր թանաքով անել, որպէսզի պայմանաժամը աչքի ընկնի. ի հարկէ

կարելի է նաև սկ
թանաքով գրել, սա-
կայն այդ եղանա-
կը, որպէս անյար-
մար, չէ ընդու-
նուած։ Բոլոր երեք
յօդուածների հա-
մար համապատաս-
խան օժանդակ գըր-
քերը բացելով և
տեղաւորելով նը-
րանց այդ գըր-
քերի մէջ, համա-
ձայն հաշուապահու-
թեան տեսական և
գործնական օրէնք-
ների, այժմ անց-
նենք միենոյն յօ-
դուածները Մայր
տոմարն անցնելուն։

Անհրաժեշտ է
Նկատել, որ յօդու-
ածներ մայր տոմա-
րըն անցնելիս, մայր
տոմարում պիտի
շարքով բացել այն-
քան հաշիւներ, որ-
քան պահանջուռմ է
ժուրնալի երեք յօ-
դուածների համար:

qu'au pâtre us n'en faire si le p (Sennar)

ՄԱՅՐ ՏՈՄԱՐ

1. Դեբետ

Դրամարկղ

Կըէղիտ 1.

| | | | | | | | | | | | | |
|-------|---|-----------|---------------|---------|--|--|-------|----|-----------|---------------|--------|--|
| Յուն. | 4 | Զան. անձ. | $\frac{1}{2}$ | 2500 00 | | | Յուն. | 25 | Զան. անձ. | $\frac{3}{2}$ | 269 87 | |
|-------|---|-----------|---------------|---------|--|--|-------|----|-----------|---------------|--------|--|

2 Դեբետ

Զանազան անձինք

Կըէղիտ 2

| | | | | | | | | | | | | |
|-------|---|----------|---------------|---------------|---------|--|-------|---|-----------|---------------|---------|--|
| Յուն. | 3 | Զան.պար. | $\frac{3}{4}$ | 5269 87 | | | Յուն. | 5 | Դրամարկղ. | $\frac{1}{1}$ | 3500 00 | |
| | » | 12 | Ազրանքից | $\frac{2}{3}$ | 5269 87 | | | | | | | |

3 Դեբետ

Ապրանք

Կըէղիտ 3

| | | | | | | | | | | | | |
|-------|---|-----------|---------------|---------|--|--|--|--|--|--|--|--|
| Յուն. | 2 | Զան. անձ. | $\frac{2}{2}$ | 5269 87 | | | | | | | | |
|-------|---|-----------|---------------|---------|--|--|--|--|--|--|--|--|

4 Դեբետ

Վճարելի մուրհակներ

Կըէղիտ 4

| | | | | | | | | | | | | |
|--|--|--|--|--|--|--|-------|----|-----------|---------------|---------|--|
| | | | | | | | Յուն. | 25 | Զան. անձ. | $\frac{3}{2}$ | 5000 00 | |
|--|--|--|--|--|--|--|-------|----|-----------|---------------|---------|--|

Մայր տոմարը, ինչպէս վերը յիշուած է, իր մէջ կենդրոնացնում է, առանց բացառութեան, առևտրական գործողութեանց բոլոր տեղեկութիւնները. այս գիրքը բացւում է մուտքի հաշուէկըշուով, որպէս մասցորդներով անցեալ տարուանից մնացած. վերջինիս հատ կըծանօթանանք, երբ կըբացենք ամբողջ ձեռնարկութեան համար գրքեր։ Ներկայ գէպքում մենք մայր տոմարը բացում ենք նրա համար, որ հասկացողութիւն ունենանք, թէ ինչպէս են ժուրնալից մայր տոմար անցկացնում։

Ձեռնարկելով ժուրնալի յօդուածները անցկացնելուն, նկատենք,

որ այդ յօդուածները անցնում են մայր տոմար այն ձեռվ, ինչպէս ցոյց է տուած ժուրնալում (տես ժուրնալ երես. 37 և 38)։

Ժեսովթին ժուրնալի 1-ի յօդուածի: Ժուրնալի դեբետ տողում երեսում է Դրամարկղ, որպէս Խորհրդականից ստացուած գումար և կրէդիտի տողում—Զանազան անձինք, այսինքն որոշ գումար փոխարինաբար տուող անձն, հետեւաբար դրամարկղը և զանազան անձինք, որպէս տարբեր հաշիւներ. առաջինը որ ստանում է—դեբետ, երկրորդը, որ տալիս է—կրէդիտ. սրա հիման վրայ մենք բացում ենք երկու ինքնուրոյն հաշիւներ՝ մինը դրամարկղի 1-ին երեսում և միւսը Զանազան անձանց—2-րդ երեսում։

Դրամարկղի հաշւում մենք գրեցինք, դեբետում՝ 3500 ր. գումարը մասնաւոր տողում, որպէս արդէն ստացուած գումար, հետեւալ խմբագրութեամբ. «5-ին Յունուարի Զանազան անձանց», այդ նշանակում է որ դրամարկղը պարտ է այդ հաշուին, որից ընդունել է փոխարինաբար յայտնի գումարը 2-րդ երեսում։ Մենք բացեցինք Զանազան անձանց հաշիւ և այդ հաշուի կրէդիտին գրեցինք 3500 ըուբլի, նոյնպէս մասնաւոր տողում, հետեւալ խմբագրութեամբ՝ «5 Յունուարի Դրամարկղից»։ Զանազան անձինք ասելով մենք հասկանում ենք մինն այն անձերից, որը ներկայ գէպքում տուել է մեզ, այսինքն դրամարկղին յիշեալ 3500 ըուբլին և ունի ստանալու դրամարկղից (դրամարկղը նրան պարտ է)։

Ժեսովթին ժուրնալի 2-րդ յօդուածի: Ժուրնալի դեբետ տողում գրւում է ապրանքը, որպէս Եղիազարեանից ստացուած և կրէդիտում՝ Զանազան անձինք, որ բաց է թողել ապրանքը մեզ յայտնի պայմաններով, որք ցոյց են տուած ժուրնալի 6-րդ տողում, «Դօկումենտների բովանդակութեան» մէջ։ Այս յօդուածի անցկացման համար էլ մենք նոյն կերպ ենք վարում, որպէս առաջին գէպքում, այսինքն՝ մենք բացում ենք Մայր տոմարի 3-րդ երեսը, ապրանքի հաշիւը, և 5269.87 կ. գումարը գրում ենք այդ հաշուի դեբետը, որպէս մեզ մօտ մտած ապրանք և որ պարտ է Զանազան անձանց հաշուին։ Զանազան անձանց կրէդիտին, 2-րդ երեսում մենք գրում ենք նոյն գումարը ապրանքի հաշուից, որպէս անձն, որ ստանալիք ունի ապրանքի հաշուից։

Ժեսովթին ժուրնալի 3-րդ յօդուածի: Դեբետի տողում նշանակուած է Զանազան անձինք։ Այս հաշիւը հէնց իր վերնագրով ցոյց է տալիս, որ նա, վ. Եղիազարեանը, ժուրնալի բովանդակութեան համաձայն, պարտ է Զանազան պարտէրենի դրամարկղին՝ 269.87 կ., և վճարելի մուրհակներին՝ 5000 ր. (որովհետեւ Եղիազա-

բեանը ստանում է). ուստի մենք անցկացրինք Մայր տոմարի 2-րդ երեսում զանազան անձանց դերետը, հետևեալ խմբագրութեամբ. «25 Յունուարի Զանազան պարտատէրերի 5269.87 կ., դրամարկղի կրէդիտում, առաջին երեսում գրեցինք 269.87 կ., որովհետև նա տուել է զանազան անձանց: 4-րդ երեսում բացինք վճարելի մուլտակների հաշիւ և կրէդիտում գրեցինք 5000 ըուբլի, նրան տուած մուրհակը՝ 5000 ըուբլու: Այդ նշանակում է, որ վճարելի մուրհակները և դրամարկղի հաշիւները մեզնից դուրս են գալիս, նշանակում է նրանք ունեն ստանալու զանազան անձերից 5269 ը. 87 կ.:

Մայր տոմարում, գումարի դիմաց մենք կոտորակի ձեւ ($\frac{2}{3}$) ունեցող նշան ենք դնում: Բաժանելին ցոյց է տալիս յօդուածի համարը, իսկ բաժանարարը Մայր տոմարի միւս հաշուի երեսը, ուր գրուած է միւնոյն թիւը: Ժուրնալում, ձախ կողմից առաջին տողում, գրուում են համարները կարգով, որոնք ցոյց են տալիս նրա յօդուածները. Երկրորդ տողում, դերետի տակ գրուում են պարտապանները, չորրորդ տողում կրէդիտի տակ – պարտատէրերը, երրորդ և հինգերորդ տողերում պարտատէրերի և պարտապանների կողքին ցոյց են տալիս նրանց հաշիւները Մայր տոմարում: Այս թուերը գլխաւորապէս նրա համար են, որ նախ համոզուենք Մայր տոմարը անցկացրած լինելուն և երկրորդ, որ ժուրնալի յօդուածները հարկաւոր դէպքում ցոյց տան ժուրնալի մանրամասնութիւնները, որովհետև Մայր տոմարում յօդուածները մեծ մասամբ գրուում են կրճատ ձեռվ, շատերը նոյնիսկ առանց որևէ բացատրութեան, լոկ թուանշաններով:

Մայր տոմարի մէջ յօդուածները այն դէպքումն են կրճատ կերպով գրուում, երբ այդ հաշիւները ունեն իրենց օժանդակ գըրքերը. օրինակ՝ դրամարկղի հաշուի համար կայ առաջին գիրք Դրամարկղ, ուր ժուրնալից մանրամասն անցնում են յօդուածները: Զանազան անձանց հաշիւների համար կայ օժանդակ գիրք՝ Ռեսկօնտրօ, ուր յօդուածները մանրամասն անցնում են. ապրանաց հաշուի համար կայ Ապրանաց գիրքը, արժէքաւոր թղթերի հաշիւների համար – Արժէքաւոր թղթերի գիրքը, վճարելի և գանձելի մուրհակների հաշիւների համար Մուլքակների գիրքը և այլն:

Ժուրնալից Մայր հաշիւ, յօդուածները իրենց մանրամասնութեամբ անցնում են այն ժամանակ, երբ այդ հաշիւներները առանձին օժանդակ գրքեր չունեն և կարեւոր էլ չէ ունենալ. այսպէս օրինակ՝ տոկոսները, կուրտաժը (միջնորդջէք), քրէները, ողճկները և այլն:

Պարզելու համար, վերցնենք առևտրական գործերից մի օրինակ, որ բաղկացած լինի մի յօդուածից, որպէս յիշեալ ժուրնալի շարունակութիւն:

| 5 Կուրտաժ | 6 Դրամարկղ | 1 Վճարուած է միջնորդ Ն. Միրզոյեանցին Ա. Ի. Մանթաշեանին, աստ, վաճառուած բրդի համար $\frac{1}{2} \text{ 0/0}$ 21000-ից. | 27 | 150 00 |
|-----------|------------|---|----|--------|
|-----------|------------|---|----|--------|

Անցկացնենք այս յօդուածը Մայր տոմարը այնպէս, ինչպէս անցկացրինք ժուրնալի նախընթաց Յ յօդուածները.

| 1 Դեբետ | Դ բ ա մ ա ր կ դ դ | Կ ր է ղի տ 1 |
|---------|---------------------------------|--------------|
| | Յուն. 27 Կուրտաժ. $\frac{5}{6}$ | 105 00 |

| 6 Դեբետ | Կ ո ւ ր ա մ ա ր կ դ դ | Կ ր է ղի տ 6 |
|---|-----------------------|--------------|
| Յուն. Դրամարկղին Ն. Միրզոյեանցին Ա. Ի. Մանթաշեանին վաճառուած բրդի համար $\frac{1}{2} \text{ 0/0}$ 21000 ը. ~ուց $\frac{5}{1}$ | 105 00 | |

Բացելով Մայր տոմարի 1-ին երեսում դրամարկղի նոյն հաշիւ, մենք գրում ենք համաձայն ժուրնալի նրա կրէդիտում, կըրճատ կերպով, առանց բովանդակութեան. իսկ կուրտաժի հաշու բացելով Մայր տոմարի 6-րդ երեսում նոր հաշիւ, գրում ենք դերետում, մանրամասն բովանդակութեամբ:

Այսպիս դէպքում, մենք դրամարկղի հաշու կրճատ գրեցինք այն պատճառով, որ այդ հաշիւը ունի իր առանձին գիրքը – Դրամարկղները և այլն:

մարկղը. Երկրորդ դէպքում կուրտաժի հաշւում մանրամասնութիւն գրելու պատճառն այն է, որ այդ հաշիւը առանձին օժանդակ գիրք չունի և դրա հարկաւորութիւնը չէ էլ զգացւում։

Մայր տոմարի բոլոր հաշիւները կարելի է կրծատ գրել, առանց որևէ բացատրութեան, որովհետև յօդուածը ժուրնալում գրւում է ամենայն մանրամասնութեամբ։ Ժուրնալը միշտ հարկաւոր է մարամասն գրել, առանց որևէ կրծատման, որպէսզի որևէ տարածայնութեան կամ վէճի ժամանակ Մայր տոմար և այլ գրքերն անցած յօդուածների համար փաստեր լինեն։

Խնչպէս երևաց ժուրնալից, Մայր տոմար անցած գումարները, որպէս գերեաներ, նոյնպէս և կրէդիտները գրւում են առաջին տողում, այսպէս անուանուած մասնաւոր տողում։ Երկրորդ տող անցնում են գրանց գումարները ամսուայ վերջին, փորձական կազմելուց յետոյ։

Բացատրելով հաշուապահութեան նշանակութիւնը առևտրական ձեռնարկութեանց համար, ես անցնում եմ նրա գործնական մասին, թողնելով առայժմ նրա մի ամենակարևոր բաժինը՝ «Գրքերի ամիսիումն», որի մասին մանրամասն բացատրութիւն կրտամբ գրքիս վերջում։

Առևտրական ձեռնարկութեան գործնական մասը բացատրելու համար, իբրև օրինակ վերցնենք միայն երկու ամիս։

Յ. Ռ. Ղարա-Մելիքեան

ԹԻՖԼԻՍ

ԻՆՎԵՆՏԱՐ

1911 թ.

1. Ակնիւ (պոլ)

Առ 1-ն Յունուարի

1911 B.

Պասիիւ (Պարտք) ..

1

2 Ակտիւ (Դոյլ)

Առ 1-ն Յունուարի

1911 թ.

Պասսիւ (Պարտք)

2

Փոխանցումն . .

2679 80 | 105673 13

| | |
|---|---------|
| 86 թերթ Երկաթ կաթսային 119'' \times 56'' \times 1/4'' | |
| Նո 1445 գ. à 2/80 | 4046 00 |
| 228 կապոց Երկաթ կրօլելնի 9 գր-ց | |
| Նո 2050 գ. 20 գ. à 3/10 | 6356 55 |
| Բակալէյնի եւ կօլնիալնի. | |
| 28 պարկ Պղպհղ Սինդապ. Նո 83 գ. 25 գ. à 18/50 | 1547 06 |
| 15 արկղ Դարչին » Նո 42 գ. 05 գ. » 20/00 | 842 50 |
| 12 » Մեխակ » Նո 46 գ. » » 14/50 | 667 00 |
| 65 պարկ Սուրճ Մօկկօ Նո 224 գ. 10 գ. » 23/50 | 5269 87 |
| 50 տակառ Շաքար Ալէքսանդրովսկի ընկ. | |
| Նո 1485 գ. 22 գ. à 6/65 | 9878 91 |
| 60 արկղ Թէյ, Նո 122 գ. 30 գ. à 45/50 | 5585 13 |

Բ ա մ ը բ ա կ է

| | |
|----------------------------------|---------|
| 75 հակ Ամերիկական մաքրած բամբակ | |
| 602,20 գ. à 12/40 | 7471 00 |
| 50 հակ Կուառ 16 գերշ-ց 2000 կտոր | |
| 61200 արշ. à 0/11 | 6732 00 |

51075 82

6 Պարտապահներ (Զանազան անձինք)

| | |
|--------------------------------------|---------|
| Մ. Գրիգորեան և ընկ., աստ | 759 75 |
| Ա. Ա. Հայրումեանց, Մօսկուա | 3459 21 |
| Ա. Ծատուրեան և ընկ., աստ | 3250 00 |
| Եղբ. Միրզախանեաններ, աստ | 8450 00 |
| «Մասիս» ընկ. աստ | 125 00 |
| Ա. Գիւլբէնկեան, աստ | 3460 70 |

19504 66

7 Գանձելի մուլհակներ

Թղթապահակում գտնում են զանձուած մուլհակներ՝

| | |
|--|---------|
| № 1, Ա. Ի. Ալիբէկեան, ա/թ. Սեպտ. 11-ից, 4 ամսով, պայման. 11 Յունուարի ս/թ. | 3000 00 |
| № 2, Արաս-Կուլի Մամեդով, ա/թ. Հոկտ. 12-ից 3 ամսով, պայմ. ա/թ. 12 Յունուարի | 4500 00 |
| № 3, Ո. Պապան, ա/թ. Հոկտ. 17-ից. 3 ամսով, պայմ. 17 Յունուարի ս/թ. | 3450 00 |
| № 4, Վարշամեան Վ., Հոկտ. 25-ից, ա/թ. 3 ա- միս և 10 օրով, պայմ. 4 Փետրուարի ս/թ. | 6500 00 |

Փոխանցումն . . . 17450 00 | 176253 61

Փոխանցումն . . .

73213 25

Փոխանցումն . . .

73213 25

3 Ակտիւ (Գոյք)

Առ 1-ն Յունուարի

1911 թ.

Պասսիւ (Պարտք)

| | Փոխանցումն . . . | 17450 00 | 176253 61 | | | | Փոխանցումն . . . | 73213 25 |
|---|------------------|-----------|-----------|--|--|--|---------------------------|-------------|
| №, 5 Ա. Ի. Ռուբինեան, ա/թ. Հոկտ 25-ից, 3 ամիս և 20 օրով, պայմ. 14 ֆետր. ս/թ. . . | 1420 00 | | | | | | Զուտ դրամագլուխ | 125160 36 ✓ |
| №, 6 Լ. Մելիք-Նուբարեան, ա/թ. Հոկտ. 12-ից 5 ամսով, պայմ. 12 Ապրիլի ս/թ. | 950 00 | | | | | | | |
| №, 7 Մ. Քերիմօվ, ա/թ. Դեկտ. 1-ից 5 ամսով, պայմ. 1 Մայիսի ս/թ. | 2300 00 | 22120 00 | | | | | | |
| | | 198373 61 | | | | | | |

4 Ակուի (Քոյլ)

Առ 28-ն Փետրուարի

1911 թ.

Պասիւ (Պարտք)

4

| | | Փոխանցումն . . . | | | | | | Փոխանցումն . . . | |
|---|---|------------------|--|--|--|----------|----------|------------------|--|
| 1 | Դրամաբղեղ | | | | | 2041 40 | | | |
| | Կանխիկ գրամ | | | | | | | | |
| 2 | Թիֆլիսի Առևտր. Բանկ | | | | | 16584 08 | | | |
| | Հնդացիկ հասարակ հաշուով | | | | | | | | |
| 3 | Տոկոսաբեր թղթեր | | | | | | | | |
| | 12 հատ Թիֆլիսի Քաղաքային վարկի ընկ. | | | | | | | | |
| | 50/0 պարտաթղթեր, իւրաքանչիւրը 1000 լ. | | | | | | | | |
| | № 3754—3765 կուրսը 82 ¹ / ₄ 0/0 լ. 9870, 00 | | | | | | | | |
| | 50/0 կտրոն. ա/թ. Յունուարի 1-ից 100, 00 | | | | | | | | |
| | 50/0 Պետական տուրք 5, 00 95, 00 | | | | | 9965 00 | | | |
| | 11 հատ I ներքին փոխառութեան 50/0 խա- | | | | | | | | |
| | ղարկութեան տոմսեր № 11264/ ₃₉ —11274/ ₄₉ | | | | | | | | |
| | կուրսը 470 1/2 լ. 5175, 50 | | | | | | | | |
| | 50/0 կտրոն. ա/թ. Յունուարի 1-ից 9, 17 | | | | | | | | |
| | 50/0 Պետական տուրք . . . 0, 46 8, 71 | | | | | 5184 21 | | | |
| | 9 հատ II ներքին փոխառութեան 50/0 խա- | | | | | | | | |
| | ղարկութեան տոմսեր № 7584/ ₃₇ —7592/ ₄₆ | | | | | | | | |
| | կուրսը 359 1/2 8. 3235, 50 | | | | | | | | |
| | 50/0 կտրոն. ա/թ. Սեպտ. 1-ից 22, 50 | | | | | | | | |
| | 50/0 Պետական տուրք 1, 12 21, 38 | | | | | 3256 88 | | | |
| | 9 հատ Վեյականներ պետական ռենտայի 40/0 | | | | | | | | |
| | № 43498—43506, իւրաքանչիւրը 500 լ. կուրսը | | | | | | | | |
| | 88 ¹ / ₂ 0/0 լ. 3982, 50 | | | | | | | | |
| | 40/0 կտրոն. ա/թ. Դեկտ. 1-ից 45, 00 | | | | | | | | |
| | 50/0 Պետական տուրք . . . 2, 25 42, 75 | | | | | 4025 25 | | | |
| | 30 Վեյականներ պետական ռենտայի 40/0 | | | | | | | | |
| | № 1275—1304 իւրաքանչիւրը 100 լ., կուրսը | | | | | | | | |
| | 88 ¹ / ₂ 0/0 լ. 2655, 00 | | | | | | | | |
| | 40/0 կտրոն. ա/թ. Դեկտ. 1-ից 30, 00 | | | | | | | | |
| | 50/0 Պետական տուրք . . . 1, 50 28, 50 | | | | | 2683 50 | 25114 84 | | |
| | Փոխանցումն . . . | | | | | 43740 32 | | | |

| | | Փոխանցումն . . . | | | | | | Փոխանցումն . . . | |
|---|--|------------------|--|--|--|--|--|------------------|----------|
| 1 | Պարտատէրեր | | | | | | | | |
| | Ս. Ծառառեան և ընկ., աստ | | | | | | | 2000 00 | |
| | «Աստղիկ» ընկ | | | | | | | 5575 50 | 7575 50 |
| 2 | Վճարելի մուլհակներ | | | | | | | | |
| | № 5, Ա. Խ. Արեան, ա/թ. Դեկտ. 10-ից, 4 ա- | | | | | | | 4755 25 | |
| | միս և 10 օրով, պայմ. 20 Ապրիլի ս/թ. | | | | | | | | |
| | » 6, Ալէքսանդրովսկի ընկ., ս/թ. Յունուարի | | | | | | | 2000 00 | |
| | 15-ից, 4 ամսով, պայմ. 15 Մայիսի ս/թ. | | | | | | | | |
| | » 7, Լ. Մ. Կրասինիկով, ա/թ. Դեկտ. 17-ից, | | | | | | | 4000 00 | |
| | 6 ամսով, պայմ. 17 Յունիսի ս/թ. | | | | | | | | |
| | » 8, Ն. Վ. Կրուպչանիկով, ս/թ Դեկտ. 18-ից, | | | | | | | 8964 00 | |
| | 4 ամսով, պայմ. 18 Ապրիլի ս/թ. | | | | | | | | |
| | » 10, Ն. Մ. Ղարագեօնեանց, ս/թ. Յունուարի | | | | | | | 1671 91 | |
| | 14-ից, 4 ամսով, պայմ. 4 Մայիսի ս/թ. | | | | | | | | |
| | » 11, Ա. Մ. Կրասինիկով, ս/թ. Փետրուարի | | | | | | | 3509 66 | 24900 82 |
| | 10-ից, 5 ամսով, պայմ. 10 Յուլիսի ս/թ. | | | | | | | | |
| 3 | Փոխար. Քաղ. Վարկի ընկ. անշարժ կայքի գրաւականով | | | | | | | | |
| | Եկալակվակի փողոցում գտնուած տան հիմնական պարտքի միացորդ, գրաւ գրուած 25 տարով, Յունուարի 1-ից, 1910 թ. | | | | | | | 21710 82 | |
| 4 | Դրամագլուխի շիջուցումն | | | | | | | | 395 83 |
| | Փոխանցումն . . . | | | | | | | | |

54582 97

5 Ակտի (Գոյք)

Առ 28-ն Փետրուարի

1911 թ.

Պահսի (Պարտք)

5

| | Փոխանցումն . . | | 43740 32 | | | Փոխանցումն . . | | 54582 97 |
|--|--|-----------|----------|--|--|----------------|--|----------|
| 4 Անշարժ կայք Թիֆլիսսւմ. Երեք յարկանի քարաշէն տուն, 3 խանութներով, Նիկոլաելմկի փողոցում, 9-րդ քաղաքամաս. | | | 45000 00 | | | | | |
| 5 Շարժական կայք Առանձին ցուցակով. | | | 1500 00 | | | | | |
| 6 Ապրանք Երևան 105 հատ Խողովակներ 2" գազ. 1917'8" ձ 0/53 111 « Ուգօնիկներ 4" Ձ 4/60 106 թերթ երկաթ կաթսային 119"×56"×1/4 Նո 1725 փ. 30 ֆ. Ձ 2/95 108 կապոց երկաթ կրօլ. 9 գր.-ց Նո 970 փ. 05 ֆ. Ձ 3/10 138 կապոց երկաթ կրօլ. 8 գր.-ց Նո 1030 փ. Ձ 3/63 | 1016 36 510 60 5090 96 3007 39 3738 90 | | | | | | | |
| Բակալէյնի եւ Կօլօնիալնի 9 պրկ № 34/42 Պղպեղ Սինդապ. Նո 26 փ. 10 ֆ. Ձ 18/25 30 » Ձ 76/105 « « Նո 91 փ. 13 ֆ. Ձ 18/25 5 արկղ Ձ 83/92 Դաբչին Նո 21 փ. 33 ֆ. Ձ 20/50 30 » Ձ 126/155 « Նո 85 փ. 02 ֆ. Ձ 20/50 25 » Ձ 325/349 Մեխակ Նո 94 փ. 10 ֆ. Ձ 14/75 67 պրկ. Ձ 128/194 Սուրճ Մօկլո, Նո 227 փ. 15 ֆ. Ձ 23/60 15 ատակ. Ձ 190/204 Շաքար Նո 467 փ. 22 ֆ. Ձ 8/08 65 արկղ Ձ 66/90 և 156/195 թէյ Նո 135 փ. 08 ֆ. Ձ 47/52 30 պարկ Կրուպչատկա 000 Ձ 12/65 50 » Ալիւր I տեսակի. Ձ 12/15 30 » Ալիւր IV « Ձ 10/15 | 479 00 1666 68 447 41 1743 52 1390 19 5366 05 3779 32 6424 67 379 56 607 50 304 50 | | | | | | | |
| Բամբակէ 45 հակ № 106/150 Ամերիկ. մաքուր բամբակ Նո 367 փ. 30 ֆ. Ձ 12/40 15 հակ № 180/194 Կտաւ 16 վեր2. 600 կտոր 17949 ¹ / ₂ ար2. Ձ 0/11 | 4560 10 1974 46 42487 16 | | | | | | | |
| Փոխանցումն . . | | 132727 48 | | | | Փոխանցումն . . | | 54582 97 |

6 Ակտիւ (Գոյք)

Առ 28-ն Փետրուարի

1911 թ.

Պասսիւ (Պարտք)

| | Փոխանցումն | 132727 | 48 | | Փոխանցումն | 54582 | 97 |
|--------------------------------|---|---|----|----------|------------|-------|----|
| 7 Երևանի բաժանմունք | Կանխիկ դրամ դրամարկղում՝ Ապրանք, չը վաճառուած՝ 25 պարկ № 47/71 Սուլք Մօկկօ, Նո-85 Գ. 20 Գ. 25/50 | 472 69 2180 25 | | 2652 94 | | | |
| 8 Պարտապահներ (Զանազան անձինք) | Եղբ. Միրզախանեաններ, աստ «Մասիս» ընկ., աստ Կ. Կ. Օրգուբաթեան, աստ Ա. Փրիդոնեան և ընկ., աստ Ի. Ա. Սուպրանով, Ռոստով Դ/վ. Ա. Պ. Միքայէլեանց, աստ Ա. Զալուխեանց, աստ Գ. Կվատաձէ, աստ Կ. Ստուկէն և ընկ., աստ | 533 60 4920 00 1923 25 3403 87 15 00 260 00 105 00 105 00 4950 00 | | 16215 72 | | | |
| 9 Գանձելի մուրհակներ | Թղթապահնակում կան զանձուած մուրհակներ՝ № 8, Եղբ. Միրզախանեաններ, ս/թ. Յունուարի 5-ից, 6 ամսով, պայմ. 5 Յուլիսի ս/թ. » 10, Աբաս-Կուլի Հաջիես, ս/թ. Յունուարի 16-ից, 3 ամսով և 15 օրով, պայմ. 1 Մայիսի ս/թ. » 11, Ա. Օ. Ղարիբեանց, ս/թ. Յունուարի 10-ից, 2 ամիս 10 օրով, պայմ. 30 Մարտի ս/թ. » 12, Լ. Մ. Խալաթեան, ս/թ. Յունուարի 27-ից, 7 ամսով, պայմ. 27 Օգոստոսի ս/թ. » 13, Ռ. Խրիմեան, Լ. Մ. Խալաթեանի բլանկով, ս/թ. Նոյեմբերի 17-ից 6 ամսով, պայմ. 17 Մայիսի ս/թ. » 15, Մ. Պ. Ղարիբեանց, Ա. Մատուրեանի և ընկ. բլանկով, ս/թ. Յունուարի 4-ից, 6 ամսով, պայմ., 4 Յուլիսի ս/թ. » 16, Մ. Պ. Մանսուրեանց, Ա. Մատուրեանի բլանկով, ս/թ. Նոյեմբերի 17-ից, 4 ամսով պայմ., 17 Մարտի ս/թ. | 8450 00 750 00 800 00 2450 00 5306 50 3050 00 2000 00 | | 22806 50 | | | |
| | Փոխանցումն | 174402 | 64 | | Փոխանցումն | 54582 | 97 |

Ակտիւ (Գոյք)

Առ 28-ն Փետրուարի

1911 թ.

Պասիւ (Պարտք)

7

| | Փոխանցումն . . . | 174402 64 | | Զուտ դրամագլուխ | Փոխանցումն . . . | 54582 97 |
|----|--|---|---------|--|------------------|-----------|
| 10 | Վերադիր վճարներ Անդրկովկասեան երկաթուղային վկայական, № 3456 «Սաքարթվելո» ընկ., Քութայիսում, վա- ճառուած և ուղարկուած 30 արկդ թէյ, ս/թ. Յունուարի 29-ին | | 3180 37 | | | 127216 88 |
| 11 | Թիֆլիսի Առևտր. Բանկին ինկասսօ տրուած մուրհակներ Տ. Խ. Աֆրիկեանի, Երևանում, պայմ. 25 Փե- տրուարի, ս/թ. | 1150 00 | | | | |
| 12 | Բողոքուած մուրհակներ Մ. Ռուբինեանցի, պայմ. 14 Փետր. ս/թ. 1420,00 Զեղչում է 50% վասա : 710,00 | 710 00 | | | | |
| 13 | Կասկածելի ստանալիքներ Ա. Հայրումեան և ընկ. | 1459 21 | | | | |
| 14 | Փոխանցիկ գումարներ Առեւորական ծախսերի հաշուից՝ Գիլդիական վկայակ. Մարտ—Յուն. ամիս. 285,32 Հեռախօսի համար 25,00 Տնային ծախսերի հաշուից՝ Հեռախօսի համար Մարտ—Յունիս ամիս. Փոխար. Քաղ. Վարկի Ընկ. անշարժ կայքի հաշուից Բանկին վճարած դրամագլուխի շիջուցման Մարտ— Յունիս ամիս Անշարժ կայքերի շահազործման հաշուից՝ Քաղ. Բանկին վճարած, տոկոսների շիջուցման Մարտ—Յունիս ամիսներինը 313,99 Եւս Թիֆլ. Քաղ. վարչութեան վճարուած գնա- հատման պետ. և զեմստ. տուրքեր 175,00 | 310 32 20 00 78 32 488 99 181799 85 | 897 63 | | | 181799 85 |
| | | | | ծանօթութիւն . . . | | |
| | | | | Դրամագլուխ առ 1-ն Յունուարի | 125160 36 | |
| | | | | Տարուայ ընթացքում աւելացան պարտքեր | 1825 00 | |
| | | | | Զուտ շահ երկու ամսուայ ընթացքում . . . | 12335 36 | |
| | | | | Զուտ դրամագլուխ առ 1 Մարտի 1911 թ. | 3881 52 | |
| | | | | | 127216 88 | |

Ինվենտարին վերաբերեալ բացատրական ծանօթութիւն.

Շարժական կայքը Ակտիւում, մենք ցոյց տուխնք, որպէս «Շարժական կայք առանձին ցուցակով», բայց, մասնաւորապէս, եթէ կայքը քիչ է, ցոյց պէտք է տալ իւրաքանչիւրն առանձին։ Կայքի ցուցակագրումը ընդհանուր գումարով կախումն ունի հաշուապահից, որը ընդ նմին պատրաստում է առանձին տետր, որի մէջ մըտցնում է մանրամասնաբար կայքի բոլոր առարկաները։

Տարուայ վերջում տոկոսային շիջուցումը կատարւում է իւրաքանչիւր առարկայի համար առանձին, յատուկ տետրում և անց է կացւում նոր թուերով, իսկ ինվենտար է մտցւում իր նախնթաց գնով, ձեռք բերած ժամանակի արժէքով։ Սրանով է բացատրւում, որ ինվենտարի թուերը կայքի նկատմամբ չեն փոխւում, թէև տարուայ վերջում մենք շիջուցանում ենք (ամորտիզացիա)։ Ընդ նմին, աչքի առաջ պիտի ունենանք, որ նախ քան շիջուցանելը, պէտք է համեմատել գրքի մէջ թուած մնացորդները իրականի, այսպէս սած, իր տեղում մնացած իրական մնացորդի հետ։

Ն. Ո. Ղարա-Մելիքեան

ԹԻՖԼԻՍ

ԺՈՒՐՆԱԼ

1911 թ.

Յունուար ամիս

| Ճ. Տօդ. | ԳԵՐԵՑ | Ա. Ա. | ԿՐԵԴԻՏ | Ա. Ա. | ԴՕԿՈՒՄԵՆՏ. ԲՈՎԱՆԴԻՇՎԱՅՈՒԹԻՒՆ | ՄԱՍՆԱ- ԼՈՐ | ԸՆԴՀԱ- ՑՈՒՐ |
|---------|---------------|-------|-------------------|-------|--|---------------|----------------|
| 1 | ԴՐԱՄ- ԱՐԿԵ | 3 | ՄՈՒՏԳԻ ՀԱՆՈՒԿԵ | 1 | <p style="text-align: center;">1</p> <p>Կանխիկ դրամ առ 1-ն յունուարի Կան տոկոսաբեր թղթեր՝ . . . 15 հ. Թիֆլ. Քաղ. Վարկի ընկ. $5^0/0$ պարտաթղթ., իւրաքանչիւրը 1000 ր. №№ 3751—3765, կուրսը $83^{1/2}/0$ ր. 1252,00 $5^0/0$ Կարոններ ա/թ. յուլիսի 1-ից 375,00 $5^0/0$ պետ. տուրք <u>18,75</u> 356,25</p> <hr/> <p>25 հ. I ներքին փոխառութ. $5^0/0$ խաղար. տոմսեր №№ 11250/₂₅— $11274/49$ կուր. 468$1/2$ = ր. 11712,60 $5^0/0$ Կարոններ ա/թ. յուլիսի 1-ից 62,50 $5^0/0$ պետ. տուրք <u>3,12</u> 59,38</p> <hr/> <p>12 հ. II ներքին փոխառութ $5^0/0$ խաղ. տոմս. №№ 7581/₃₄—7592/₄₅ կուրսը 357$1/4$. . ր. 4287,00 $5^0/0$ Կարոններ ա/թ. սեպտ. 1-ից 20,00 $5^0/0$ պետ. տուրք <u>1,00</u> 19,00</p> <hr/> <p>12 հ. Վկայական. պետ. բէնտայի $4^0/0$ №№ 43495—43506 իւրաք. 500 ր., կուր. $90^3/4^0/0$ ր. 5445,00 $4^0/0$ Կարոններ ա/թ. գեկտ. 1-ից 20.00 $5^0/0$ պետ. տուրք <u>1,00</u> 1900</p> | 25000 00 | |
| | Ա.Յ.Յ.Ա.Ր.Ը | 5 | | | Երեք յարկանի քարաշէն տուն, 3 խանութներով, Նիկոլ. փողո- ցում Զ-րդ քաղաքամաս . . . | 34423 13 | 45000 00 |
| | | | | | Փոխանցումն . | 104423 13 | |

ՅՈՒՆՈՒԱՐ ամիս

| Ֆ. յու. | ԳԵՐԵՏ | Ա. մ. | ԿՐԵԴԻՏ | Հ. մ. | ԳՈՒՌՈՒՄԵՆՏ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ | Մասնա- ւոր | ԸՆԴՀԱ- ՅՈՒՐ |
|------------------|-------|-------|--------|-------|--|---------------|----------------|
| | | | | | ՓՈԽԱՆՑՈՒՄՆ . . . | 104423 | 13 |
| Չարժակ. կայf | 6 | | | | Շարժական կայք առանձին ցուցակով | 1250 | 00 |
| Ապրանf. | 7 | | | | Պահեստում կայ ապրանք՝ Երկար թէ 240 հ. Խողովակներ 2' գազ. $3980' \times \frac{0}{53} = 2109,40$ | | |
| | | | | | 124 » Ուգոլ. 4' $\times \frac{4}{60} = 570,40$ | | |
| | | | | | 86 թ. Երկաթ 119" $\times 56" \times \frac{1}{4}$ 1445 դ. $\times \frac{2}{80} = 4046,00$ | | |
| | | | | | 228 կ. Երկաթ կրօվել. 8 դ-ց. $\underline{\text{Ն}} \underline{\text{ո}} 2050 դ. 20 դ. \times \frac{3}{10} = 6356,55$ | | |
| | | | | | Բակալէյնի եւ կօլօնիալնի | | |
| | | | | | 28 պ. Պղպեղ Սինդապուրի $\underline{\text{Ն}} \underline{\text{ո}} 83 դ. 25 դ. \times \frac{18}{50} = 1547,06$ | | |
| | | | | | 15 արկդ Դարչին | | |
| | | | | | $\underline{\text{Ն}} \underline{\text{ո}} 42 դ. 05 դ. \times \frac{20}{00} = 842,50$ | | |
| | | | | | 12 արկդ Մեխակ | | |
| | | | | | $\underline{\text{Ն}} \underline{\text{ո}} 46 դ. \times \frac{14}{50} = 667,00$ | | |
| | | | | | 65 պ. Սուրճ Մօկկօ. | | |
| | | | | | $\underline{\text{Ն}} \underline{\text{ո}} 224 դ. 10 դ. \times \frac{23}{50} = 5269,87$ | | |
| | | | | | 50 ա. Շաքար Ալէքսանդր. ընկ. | | |
| | | | | | $\underline{\text{Ն}} \underline{\text{ո}} 1485 դ. 22 դ. \times \frac{6}{65} = 9878,91$ | | |
| | | | | | 60 արկդ Թէյ | | |
| | | | | | $\underline{\text{Ն}} \underline{\text{ո}} 122 դ. 30 դ. \times \frac{45}{50} = 5585,13$ | | |
| | | | | | Բամբակէ | | |
| | | | | | 75 հ. ամերիկ. մաք. Բամբակ | | |
| | | | | | $\underline{\text{Ն}} \underline{\text{ո}} 602 դ. 20 դ. \times \frac{12}{40} = 7471,00$ | | |
| | | | | | 50 հ. Կտաւ 16 դ. 2000 կտոր | | |
| | | | | | 61200 արշ. . . $\times \frac{0}{11} = 26732,00$ | 51075 | 82 |
| | | | | | Մեր պարտապանները | | |
| Զանազ. ահձինf | 8 | | | | Մ. Գրիգորեան և ընկ., աստ. 759,75 | | |
| | | | | | Ա. Ի. Հայրումեանց, Մօսկ., 3459,21 | | |
| | | | | | Ա. Մատուրեան և ընկ., 3250,00 | | |
